

24590

24591

24592

148

p 182

2519 1042-44
5-44

ՊԵՏՐՈՍԻ

ՄԻԹԱՍԹԱՆՔԻՈՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀԱՏԸՆՏԻՐ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ
ՅԻՏԱԼԱԿԱՆ ԼԵԶՈՒԷ

Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒ
ՊՕԼՍԻ ՏԵԱՌՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԱՐԲ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

2519



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԱՊԵԱՆ

1841 = ՌՄՂ

85-2



3239

39

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Սեթասթագիոս Խաաւացի Թատր-
 երգակ բանաստեղծիս անուանը քա-
 ջածանօթ է ազգիս իր վարուցը պատ-
 մութէն որ Վարապատում գրոցը մէջ
 կայ : Իր սքանչելի գրուածոց քաղցր
 ճաշակէն ալ զուրկ մնացած չէ բոլո-
 րովին որովհետև ոյս Արբազան գոր-
 ծողութիւներուն Թարգմանութիւնը
 տաճկական լեզուաւ վայելեց տպեալ
 ՚ի Ա Էնէտիկ յամին 1831 : Բայց սա-
 կայն ոմանք գրասէրք խնդրելով զանի
 հայերէն աշխարհաբառ լեզուաւ ալ
 կարգալ, Ասումասկան ընկերութիւնը
 փութաց լեցընել անոնց գովելի փա-
 փաքը առաջիկայ Թարգմանութիւն :
 Ար յուսայ նոյն ընկերութիւնը ? որ
 ազգը ախորժանօք պիտի կարգայ ասի-
 կայ , որով յորդորվի Թերևս ՚ի լոյս
 ընծայել միւս գործքերն ալ գերա-
 հըռչակ հեղինակիս :

U C S

U C L B

Ն Ա Խ Ա Գ Ի Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ամենուն յայտնի է թէ հին կտակարանը նոր կտակարանին հետ ինչ յարաբերութիւն ունի : Ամեն հաւատացեալները աղէկ գիտեն թէ անիկաց ասկից այնչափ տարբերութիւն ունի, որչափ որ տարբերութիւն ունի պատկերքի մը ստուերը, նոյն իսկ պատկերքէն, խոստումը՝ պարգևէն, Յիսուսի Քրիստոսի պատկերը՝ նոյն ինքն Քրիստոսէն : Ուստի նք հարք կը զրուցեն թէ, Աբելին մահը (որն որ աս թատրոնական գործողութիւն մէջ պիտի նկարագրենք) բոլորովին Յի Գի Փրկչին մահուանը օրինակը ու նմանութիւնն էր : Ու անկից կըրնանք աղէկ մը հասկընալ հիմնական սուրբ խորհուրդին մեծութիւնը, որ այնչափ դարերէն առաջ՝ Յաւիտենական նախախնամութիւնը՝ ուղեց զանի մեզի պատրաստելու, խոստանալու, ու առաջուց անոր օրինակը մեզի ցըցընելու :



Դ Ե Ր Ա Ս Ա Ն Ք

ԱԴԱՄ :

ԵԻԱՅ :

ԿԱՅԵՆ :

ԱԲԵԼ :

ՀՐԵՇՏԱԿ : (*)

ԴԱՍ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԽԱՂԱՐԿՈՒԱՅ :

(*) Թէպէտ և նձաշունչ գիրքը՝ հրեշտակին ամ-
մէն զրուցածը՝ աստուծոյ բերնէն ըսված կերեցը-
նէ , բայց սրբոյն Գիտնէսիոսի կարծիքն ալ աս է
որ , բոլոր աստուածային յայանութիւնները , երև-
մունքները , ու ըւսաւորութիւնները՝ Թէ բնու-
թեան , Թէ օրինաց , և Թէ շնորհաց դարուն մէջը՝
հրեշտակի ձեռքով եղած են :



Մ Ա Տ Ա Բ Ե Լ Ի

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ա Բ Ե Լ , Ե Տ Թ Ը Կ Ա Յ Ե Ն

ԱԲԵԼ. Ո՞վ ամենակարող անձ , որչափ զարմանալի են քու գործքերըդ , ես քանի որ ողջ եմ նէ , ամէն օր քու անուշիկ պիտի գովեմ ու փառաբանեմ : Ո՞վ աղգեր , եկէք ինձի հետ գովենք զանիկայ , անոր գթութիւնը ու ողորմութեանը վրայ ո՞վ կրնայ երկբայիլ . Մբելն պատարագը ու զոհը քաղցրութիւնը ընդունեց : Տէր ես ո՞վ եմ քո առջևդ , մարդու զաւակը ինչէ որ դու անոր այնչափ խնամք կը տանիս ու կը հոգաս :

ու անոր այնչափ աղէկուհիներ ընե-
լով, քեզ անոր ճանչցնել կուտաս :
Կայէն. Ե՛ղբայր , ինչո՞ւ այսչափ ուրախ
ես , ինչո՞ւ մէկէն ՚ի մէկ այսչափ ե-
րեսդ կըխնդայ , ու խնտումէն աչ-
քեդ արցունք կուգայ :

Աբէլ. Ո՞վ սիրելի եղբայր , դու ալ եկն
ինձի հետ ուրախակից եղի՛ր , ապա
թէ ոչ՝ իմին ուրախութիս կատար-
եալ չըլլար : Ի՞՞՞՞ իմ ըրած զո՞հս
հաւնեցաւ ու ընդունեց :

Կայէն. Ի՛նչե՛լ , դուն սա բանը կրնաս ին-
ձի հաստատել , ու հաւտացընել ,
վասն զի ասիկայ պարսպ մէկ յոյս
մըն ալ կրնայ ըլլալ :

Աբէլ. Ի՛այց նոյն ձայնը խիստ յայտնի է ,
տարերքը՝ առանց անոր հրամանին
չեն կրնար խօսիլ ու բան մը ընել :
Իս մտիկ ըրէ՛ , քիչ մը առաջ ոչխար-
ներուն մէջէն մեծ ոչխարները , ու
գէր գառնուկները զատեցի , ու
պարզեւողին նմի սիրով ու ուրա-
խութե՛ մը՝ զանոնք զո՞հ ըրի , ու
ըսի , տէր իմ , ոչ միայն իմ քրտան-
ցրս ու վաստակոցս առաջին պտուղ-
ները քեզի կը նուիրեմ , այլ նաև
իմ սրտիս առաջին անմեղ խոր-

հուրդները ու բաղձանքները քեզի
կընծայեմ. դուն քաղցրութիւնս
ու ընդունէ՛ երբոր կու-
ղէի ես իմ խօսքս շարունակել, մէ-
կէն ՚ի մէկ զարմանալի տեսարան մը՝
իմ անկատար խօսքերը շրթունքիս
մէջը սառեցուց, ինչպէս որ պայ-
ծառ գիշերները՝ երկինքէն վար աս-
արդ կիյնայնէ, այնպէս ալ ցորեկ-
վան ատեն արևուն առջևը՝ տեսայ
որ երկինքէն պայծառ ու լուսաւոր
բոց մը ինջաւ, ու պատրաստած զո-
հերը վառեց, մոխիր դարձուց, ու
փախաւ, բայց իմ սրտիս մէջը թո-
ղուց զարմանք, ուրախութիւն, յոյս
ու վախ մը:

Կայէն. Պուն ինծի շատ զարմանալի բա-
ներ կը պատմես, ես քու հաւա-
տարմութեդ վրայ չեմ երկբայիր:
Մնաց որ՝ ես ալ նոյն զոհեր ըրի,
բայց ասանկ պարծենալու անսովոր
ցուցանքներ չի տեսայ: Ա՞յլ մայր
իմ, աղէկ ատեն եկար, տէս Վ. բելը
ինծի ինչ արտաքոյ կարգի հրաշք-
ներ կը պատմէ, դուն ալ մտիկ ըրէ՛,
ու ինծի զրուցէ թէ քեզի շիտակ
կերևայ մի:

ԵՒԱՅ, ԿԱՅԵՆ ՈՒ ԱԲԵԼ

- Եւայ . Պարտապ տեղը դուռն կը տարակուսիս . ես իմ աչքովս տեսայ :
- Կայէն . Ինչ տեսար :
- Եւայ . Ըն մարուր պատարագը ու երկինքէն ինչած կրակը , որ զանի վառեց :
- Կայէն . Ուրեմն իրա՞ն է :
- Եւայ . Ըս անիրաւ կասկածը ու երկբայ-ութիւր մէկ դի ձգէ . ու աս բանիս վրայ ստոյգ ու սպասում եղի՛ր :
- Կայէն . (Ո՞վ անգութ ստուգութիւնն ?)
- Եւայ . Որդեակք իմ , չափազանց ուրախութիւր ձեզ չի խաբէ . դուք ձեր առաջին պարտքը նոյ վճարեցիք . հիմա ամէն մարդ իր բանին գործքին երթայ . Կայէնը դաշտը երթայ , ու Ըբեւն ալ իր ոչխարները թո՛ղ երթայ նայի . Ըդամ ձեզն ինչ գործք որ յանձնեց նէ , ան գործքերը ըրած ստեննիդ ալ՝ նոյ հաճոյ կըլլաք . ու ով որ իրեն պարտքը կը կատարէ նէ , անոր ծտուայութիւն ըրած կըլլայ :
- Աբել . Ինձի ասկից աւելի հաճոյ ու ընդունելի հրաման մը չի կրնար ըլլալ :

Մայր իմ դուն գիտես թէ ես իմ
 հաւատարիմ խաչինքս ո՞րչափ կը սի-
 րեմ, դուն գիտես թէ ես անոնց
 համար ո՞րչափ նեղութիւն կը քա-
 շեմ, ու քրտինք կը թափեմ, ու ին-
 ծի բան մը չերևար :

Ես ան բարի քաջ հովիւն եմ,
 որ իմ հօտըս շատ կը սիրեմ,
 ու որպէս զի զանի փրկեմ,
 իմին անձըս ես կը դնեմ :
 Իմ սիրասուն գառնուկներըս,
 մէկիկ մէկիկ կը ճանաչեմ,
 անոնք իրենց լաւ հովիւը,
 ուր որ տեսնան սիրով գրկեն :

ԵՒԱՅ ՈՒ ԿԱՅԵՆ

Ե-այ . | Ինչ է մեզադ ու հոգըդ, որ մե-
 կէն ՚ի մէկ այսչափ շատ խորունկ ու
 գէշ գէշ կը մտմտաս . Ինչու չես
 խօսիր . Ինչո՞ւ մարդու երես չես
 նայիր . Ինչո՞ւ դէմքդ ծուեր ես,
 երեսիդ գոյնը դեղներ է, շըր-
 թունքդ կը դողայ ու կը հաւաշէ .

ասոնք ամմէնն ալ ցաւոց ու բար-
կութի յայտնի նշաններ են : Ինչ
բանի համար կը նեղեա , ինչ կը
մամասա :

Կայէն . Ուրախ ըլլալու ու խնտում ընելու
ալ պատճառ մը ունիմ արդեօք :

Եւայ . Ի՞նչու հարազատ եղբօրդ այսչափ
մեծ փառքը քեզ ուրախացրնելու
պատճառ չի կրնար մի ըլլալ :

Կայէն . Ո՛հ անիկայ ինծի շատ նեղութիւն
կուտայ , թէ պարգև եղած ըլլայ
թէ վարձ :

Եւայ . Ի՞նչ բանը որ ամմէնը կը խնդացրնէ ,
քեզ ինչո՞ւ պիտի նեղէ ու վշտա-
ցրնէ : Ու ուրիշին եղած աղէկու-
թիւնը քեզի ինչու գէշութի կը
սեպես , ու ինչո՞ւ անկէց կը վախ-
նաս : Ի՞նչ անհնազանդ ու կամակոր
ապստամբ ցաւը՝ մեր հասարակաց
թշնամուոյն բուն յանցանքն է , ու
անիկայ ասով հոգիներուն անոյշ
կապը կը բակէ , ճշմարիտը կը պահէ
կը ծածկէ , ու սէրը կը վերցրնէ ,
աս դժբաղդ ու ձախորդ բոյսը խլի՜
արմատէն , ո՛հ դուն չես գիտեր թէ
եօքը որչափ թունաւոր ընծիւղներ
ոստեր կարձակէ : Միւրեւն որդէկ իմ


աս բանս էս ինձի մեծ հոգ էմ
 ըրեր , ու մասնաւորապէս քեզի
 խրատ կուտամ : Ի՞նչ որ սրտիդ մէ-
 ջը աս ժանտախտը պահելու ըլլաս ,
 ամեն վայրկեան եղբօրդ վրայ նոր
 բաներ պիտի գտնես քեզ տանջե-
 լու : () ր մըն ալ պիտի նախանձիս
 քու եղբօրդ՝ քու նախանձիդ
 համբերելուն համար : Արդեակ ,
 դուն քեզի եկ՛ , չըլլայ որ մեզմէ
 ծնօղ զաւակները , իրենց ծնօղքէն
 գէշ օրինակ մը առած ըլլան :

Ո՛հ ինչ կըլլայ՝	ան մեծ գետը ,
իրեն երկայն	ճամբուն մէջը ,
երբոր հիմա	աղբեր քովը ,
այսպէս պղտոր	է իր ջուրը :
Ո՛վ դուք զաւակք	դժբաղդուծէ ,
որպիսուծիւն	ձեր այս օրվան ,
կը ցըցընէ	յայտ յանդիման ,
չարուծիւնը	յետնոց հանայն :

Կայէն . Ես իմ պզտիկ եղբօրըս արժանա-
 պատուութիւնը ու վարձքին՝ անբան
 ու անզգայ անասունի պէս համբե-
 րեմ : Ե՛նոր փառքը՝ ինձի նախա-
 տինք մը նէ : Արչափ շատ իրաւունք-

ներ ու պատճառներ կրփնտուեմ
 նէ , անոր փառքը պակսեցընելու
 համար , այնչափ աւելիալ պատ-
 ճառներ կը գանեմ անոր փառքը
 աւելցընելու : Ու անոր վրայ որ-
 չափ աւելի կը նախանձիմ նէ , այն-
 չափ աւելի զանի կը մեծցընեմ , ու
 որչափ կը փափաքիմ որ անիկա պրզ-
 տիկ ու ցած երևնայ , այնչափ աւե-
 լի անիկայ մեծ ու վսեմ աչքիս կե-
 րևայ . իմին ցաւոցս ու տանջանացս
 ես ինքն պատճառ կըլլամ :

Ար սուուցանեմ ու կը մեծցընեմ իմին տան-
 ջանքս , երբոր Աբելին երջանկութիւնը կը
 բերեմ միտքս . սաստիկ կը կատղիմ ու
 խիստ կը դողամ կը խոցի սիրտըս , կատեմ
 զանիկայ , բայց պատճառն ի՞նչ է , չի հասնիր
 խելքս : Չանի ատելու՝ ես ամեն վայր-
 կեան՝ նիւթ կը փնտուեմ , զան չի սիրելու՝
 բնաւ պատճառ մը՝ ես ոչ գտանեմ . բայց
 իմ բարկութիւնս՝ ու ատելութիւնս՝ նորէն
 կը վառեմ , երբ ատելութեան զանի արժա-
 նի սեպել ոչ կարեմ :



Հրէշ . Մի ինչ բարկութիւն է : Կայէն ,
 ինչո՞ւ երեսդ կախերէս : Խօսէ ,
 պատասխան տուր , մեղքդ ու
 յանցանքդ պատմէ որ քեզ արդա-
 րացընէս : Մըդարը՝ երբոր խօսե-
 լու սկըսինէ , նախ զինքը կը
 մեղադրէ . մեղքը խոստովանիլը ,
 ճանչնալը , ու խպնիլը , ապաշխա-
 րութեան ու զղջման մէկ ճասն է :
 Գու՛ն տակաւին կրնաս քու վարձ-
 քըդ աստուծո՞ւմ տունուլ , թէ որ
 բարի գործքեր ընէս :

Կայէն . Բայց թէ որ սխալիմ ու յանցանք
 մը գործելու ըլլամ :


Հրէշ . Ո՞վ ողորմելի . ան ատենը քու կին
 յանցանքդ միշտ քու կին աչքիդ
 կերևայ , մեղաւոր մարդը՝ վայրկեան
 մը հանգստութի՛ չունի . թէպէտ և
 իրեն յանցանքը մարդ մը չի տես-
 նար , բայց անիկայ իրեն անաչառ
 դատախազը իր քովը տեսնալով ,
 միշտ կը դողայ ու կը վախնայ յայտ-
 նի բաներէն , կասկածներէն , գի-
 շերվան մութէն , օրվանը լոյսէն , իր

յանցանքը գիտցողէն ու չի գիտցողէն • երբոր արթուն է , սիրտը միշտ խռովութեան մէջ է • ու երբոր կը քնանայ , իր հալածիչը , բերաւոր կերպարանքով իրեն աչքին կերենայ :

Կայէն • Ուրեմն • • •

Հրէշ • Գիտեմ ինչ կուզես զրուցել • չէ՛ , իրաւ չէ՛ • քու մեղքդ միշտ քու իշխանութիւնդ տակն է • դուն քու ազատ իշխանութիւնդ միշտ կրնաս անոր վրայ տիրել • դու քու անձիդ ինքնիշխան դատաւորն ես • ու աս իշխանութիւնդ դուն անոր համար ունեցար , որ ետքը յանցանքդ արդարացընելու պատճառ մը չունենաս :

Անմեղ ասողերը՝	դուն կը մեղադրես ,
ու ճակատագիրըս	ձախողէ կըսես •
բայց չես հասկըցեր	ու ոչ մտածես ,
թէ ազատութիւնդ	դէշ կը դործածես :
Դու քու խելքովդ	շղթայ շիներ ես •
քու ազատութեանդ	վրան պըլլեր ես •
աստուծոյ արլած	աղվոր պարգևը ,
դու քու չարութիւնդ՝	քեզ պատիժ կընես :



ԿԱՅԵՆ , ԵՏՔԸ ԱՐԵԼ

Կայէն. Լ՛րէլին փառքը միայն բաւական
 չէ՞ր արդեօք իս կշտամբելու ու նա-
 խատելու . ասանկ անողորմ յանդի-
 մանու թիւններու ալ համբերե՞մ :
 Լ՛հա ատելի եղբայրս ոչխարներով
 փարախէն դուրս կելլայ . ի՛նչպէս
 անո՞ր ամմէն նայուածքին մէջը՝
 սրտին ուրախութիւնը կերևնայ .
 ի՛նչպէս անոր երեսին վրայ՝ յաղ-
 թութիւնը կը պարծի . փախչիմ որ
 երեսը չի տեսնամ . վս՞ զի քանի որ
 կը տեսնամ աւելի կը զզոււիմ . անոր
 բռնած ճամբան իմին ճամբայէս
 շատ տարբեր է : Լ՛նիկայ լուռ կե-
 նալովը՝ իմ երեսս կը զարնէ իմ
 յանցանքըս , իրեն փառք վաստըկի-
 լը , ու իմին կորսընցընելս :

Աբէլ. Ե՛ղբայր , ասանկ ո՞ւր կը վազես
 կերթաս . իս տեսնալուդ համար կը
 փախչիս :

Կայէն. Ե՛ս արժանի չեմ , որ քեզի պէս
 անձաճաճոյ մարդու քովը մօտենամ :

Աբէլ. Ե՛ս ի՛նչ նոր ու անսովոր զուրցը-
 վածք է , ո՞չ իս ասանկ երկբայու-

Թեան մէջ մի թողուր :

Կայէն. Քուկին փառքըդ ամմէնը իմացան,
դուն պատմեցիրնէ ես ալ լսեցի .
կուղէն որ ամմէն վայրկեան նորէն
աս բանիս վրայ պարծենաս :

Աբէլ. Պարծենամ. ինչ բանի համար . ես
ուռնիմ արդեօք անանկ բան մը որ
անտարված չըլլայ . ու ինչու հա-
մար պարծիմ ; երբոր ամմէնը աս-
տուծոյ պարզեն է :

Կայէն. Ուրեմն դու միայն այ պարզեացը
արժանի ըլլալու զոհեր կըմատու-
ցանես . վն զի քու զոհերդ կընդու-
նի , ու իմին զոհերըս չընդունիր :

Աբէլ. Ես ինչ խօսք է . ինչ զուրցեցիր
եղբայր . ահա աս յանցանքը առջի-
նէն գէշ է . քու ողորմած տէրդ՝
իմ տուրքս քուկինէդ որոշելով ,
քու յանցանքդ ու սխալանքդ քեզի
կիմացընէ . ու աս խրատը ու ազդա-
րարու թիւնը քեզի պատճառ պիտի
ընես նորէն մեղք գործելու . ան
լոյսը որ քեզ պիտի լուսաւորէր ,
քեզ կուրացընէլու պիտի ծառայէ :
Ո՞վ ան , քու ձայնդ որպիսի տար-
բեր ներգործութիւներ ու պատու-
ներ կը ծնանի մեր սրտին մէջը :

Պ՛ու՛ն հաւասարապէս ամմէն հոգի-
նէրը ուղիղ ու շիտակ ճամբան կը
կանչես . բայց մէկը կը զղջայ , մէ-
կայն ալ աւելի մեղաւոր կըլլայ :

Մեղու՛ն ու օձը՛ միևնոյն հիւթը՛ շատ հեղ
կը ծծէ , բայց նոյն սնունդը՛ անոնց փորին
մէջ՛ զինքը կը փոխէ : Օձին մարմնոյն մէջ՛
աղվոր ծաղիկը՛ թոյնի կը դառնայ , մեղուին
փորը՛ ծաղիկը անոյշ ուտելիք կըլլայ :

3239 39
Կայէն . Ո՞վ անտանելի ամբարտաւան . տա-
կաւին երեսալ ունիս իս յանդի-
մանելու . Լ՛քէ՛լ . դու՛ն ինծմէ աւել-
լի գերագոյն իշխանութի մը ունիս ,
որ ես քեզ պատուեմ , ու խօսքիդ
յարգութի ընեմ , զրուցէ ինծի ,
քեզի ի՛նչ անուն տամ , ու ի՛նչ ա-
նունով քեզ կանչեմ . Տէր իմ ,
վարժապետ իմ , չէ՛նէ հայր իմ ,
քեզի զրուցեմ :

Աբէլ . Ո՞հ եղբայր դու՛ն իմ միտքըս աղէկ
չես հասկընար . աս խօսքերը ինծի
զուրցընել տրվողը՛ եղբայրական
սէրն է . հպարտութիւնը չէ՛ :

Կայէն . Լ՛ս եղբայրական սէրը՛ ես քեզմէ
չեմ ուղեր :

Աբէլ. Բայց ատելութիւնը

Կայէն. Իմին ունեցած զուարճութիւնս .
 ու մեծ օգուտս , մի միայն ատե-
 լութիւնն է :

Աբէլ. Իս ատես , այսչափ կը զուարճանամ .
 չէ՛ չէ՛ եղբայր . թէ որ իս յանցա-
 ւոր կը կարծես , ալ աղէկ է որ իս
 պատժես , ու պատիժը ըլլայ պտուղ
 սիրոյ և ո՛չ բարկութիւն . քու ատե-
 լութիւնդ աւելի մեծ տանջանք մը
 ինձի չի կրնար ըլլալ . դուն ինձի
 ճամբայ մը ցըցուր , որով կարենամ
 քու ատելութիւնդ փարատելու .
 զրուցէ , ի՛նչ որ կուզեսնէ ըսէ
 հրամմէ , ես քեզի սպասուոր ծա-
 ոայ կըլլամ , ու ամմէն զրուցածդ
 կը կատարեմ , միայն թէ դու իս առ-
 ջինին պէս սիրես :

Կայէն. Ի՛նչու կեցիր . վս զի քու կին ամմէն
 խօսքդ՝ նոր նիւթեր կը ժողովէ սըր-
 տիս մէջը՝ քեզ ատելու ու քեզմէ
 զզուելու համար :

Աբէլ. Բայց իմ յանցանքս ի՛նչ է :

Կայէն. Քու կին յանցանքդ՝ բնաւ յան-
 ցանք չունենալն է :

ԱՌԱՄ, ԿԱՅԵՆ ՈՒ ԱԲԵԼ

ԱԴՄՏ. **Բ**նչ պիտի ըլլան աս բարկութի
խօսքերը, ու սիլ է պատճառը. Բնչ
շուտ լավեցաւ աշխարհքիս մէջը
եղբայրական կռիւը. ու սիրոյ կա-
պը Բնչ շուտ քակվեցաւ. ո՛հ Բնչ
գէշ օրինակներ կուզենք տալ մեր
յանցանաւոր թուանցը: Աւ աշ-
խարհքիս իշխանութի կուտանք,
որ քանի որ մեծնայնէ, աւելի
գէշնայ: Այս զի անիկայ մեր մե-
ղացը համար, ՚ի սկզբան յանցաւոր
եղաւ, ու կամաց կամաց աստիճանա-
բար մեղաց մէջ չինկաւ, այլ մէկէն
՚ի մէկ ծնածին պէս իր մեղաց չափը
լեցուց:

Կայէն. Այլ հայր աս յանդիմանութիները
դունն Մբելին ըրէ, իմ բարկութեա
պատճառը անիկայ է. այ սիրելի ե-
ղածին պէս, հպարտացաւ, ալ չի
քաշվիր:

ԱԴՄՏ. Թէ որ իմ զաւակներուս բնութիւր
աղէկ չի ճանչնայի, քեզի կը հաւա-
տայի: Կայէն կայէն, աս Բնչպէս
անմատուի է որ, քեզ կը կուրացընէ:

Մ.բեւը յանցաւոր է , վասն զի .բեզի
 չի նմանիր : Նայէ՛ նայէ՛ որ անոր
 առաքինութիւնը հետեող ըլլաս , ու
 նախանձող չըլլաս : Խիստ պատ-
 ուական ու առատ պարգևները՝
 ամէնէն առաջ՝ այ տալ կը վայէ .
 ու պէտքը չէ որ դուն Մ.բեւին
 սրդողես որն որ .բեզի օրինակով
 արդարութիւն կը սորվըցնէ : Արդ-
 եակ , ես կուլամ .քու հիմակվան
 որպիսութիւն վրայ , բայց աւելի կը
 վախնամ .քու կին ետքի վիճակիդ
 համար . ես կը տեսնամ որ դուն գա-
 հալէ՛ժ տեղ մը կայներ ես , ու վար
 իյնալու մօտեցեր ես , ու դուն բը-
 նաւ չես իմանար : Ա՛հ , ասիկայ մեղ-
 քին չար սովորութիւն է . մտաց լոյսը
 կը վերցընէ , գործքի սկսելու ա-
 տենը՝ իր երեսը կը գոցէ , կը համո-
 ղէ , կը թունաւորէ , ու ետքը զինքը
 կը յայտնէ :

Երկար ճամբուն մէջ՝ ընտրէ՛ դուն .բեզի՝
 լաւ առաջնորդ մը , քանի որ լուսոյն՝ դեռ
 մնացեր է՝ պզտիկ ճաճանչը , Գարձիւր դու-
 նորէն՝ ան ազլոր առջի՝ անմեղ վիճակը ,
 որ կորսնցուցիր՝ զգալով նախանձ՝ քու

սրտիդ մեջը : Թէ որ քեզ պատէ՝ աւելի
մ'Թին՝ ու գէշ ստուեր մը, Թէ որ քեզ ծած-
կէ՝ աւելի մէկ սև՝ միգամած ամպ մը :
Ո՞վ ողորմելի՝ պարսպ ան ստեն՝ առջի
շաւիղը, կաշխատիս գանել՝ ան աղջամըղ-
ջին՝ մ'ԹուԹեան մեջը :

Կայէն, Մ'բեւ • ուրախ եղեր, խնդա՛ ու
յաղթանակէ՛, վս՛զի ամմէնը ինձի
դէմ են, նայէ՛ որ տակաւին մարդ
մը մնաց աս նորաստեղծ աշխարհ-
քիս մեջը, որ դուն խաբած չըլլաս :
Մ'հա մայրըս կուգայ, եկո՛ք քովս,
ու դուն ալ սկսէ՛ իս նախատելու,
վասն զի աղէկ գիտեմ որ դուն ալ
ինձի Թշնամի ես :

ԵՒԱՅ ՈՒ ՎԵՐԻՆՆԵՐԸ

Ե-այ • Որդեակ • ինչ կըսես, դու քեզմէ
ուրիշ քեզի Թշնամի չունիս :
Ա-այ • Մ'նոր հոգին այնչափ հիւանդ է որ
իրեն առողջութիւր չուղեր, մանա-
ւանդ կը վախնայ ան ձեռքէն, որ
պատրաստ կեցեր է զինքը ըսնացը-
նելու համար : Մ'ս անբժշկելի վէրբը

դեղով չըւընանար . մեր փափաքը
պարապը պիտի երթայ :

Ե-այ . Վուն՝ սասանկ խօսք մի՛ զըուցեր .
ես՝ անոր վրայ շատ յոյս ունիմ . ա-
նիկայ իր բնութիւնը պիտի փոխէ ,
իր յանցանքը պիտի ատէ ու թէ որ
իրեն ծնողացը մեղքին ու յանցա-
նացը հետևող եղաւ նէ , անոնց
զղջմանը ու ապաշխարանացն ալ հե-
տևող պիտի ըլլայ : Արդեակ , քեզ
նայիմ , քու սիրելի մօրդ ազվոր յոյ-
սերը պարապը մի՛ հաներ : Ես քու
փոփոխութեդ նշանը կուզեմ տես-
նել : Սիրէ՛ քու եղբայրդ ինչպէս
որ առաջ կը սիրէիր . մէկ սիրալիր
համբոյր մը թող վկայ ըլլայ ձեր
հաշտութեը ու սիրոյն : Երկուքդ
ալ մէկ տեղ իմ գիրկըս եկէ՛ք , ու
արենակից եղբայր ըլլալնիդ , ու
նորէն իրար սիրելնիդ ինծի իմա-
ցուցէք . կայէն՝ իմ մօտս եկոր .
Լքել՝ դու ալ մօտեցիր :

Աբէլ . Ես պատրաստ եմ :

կայէն . (աստուած չընէ)

Ե-այ . Ա՛յլ անձ , աս ինչ զարմանալի բան
է . կայէն ինծի մօտենալու տեղը ,
ինծմէ հեռու կը փախչի :

Կայէն . Ս'այր իմ , սա բանը մէյմն ալ մի՛
զըուցեր . քուկին սա հոգըդ պա-
րապ է :

Ե-այ . Իմ հոգս պարանպ է : Ուրեմն քեզ-
մէ ալ բան մը պիտի չի յուսամ :
Քու մօրդ արցունքը քու սիրտըդ
բնաւ չի շարժե՞ր , ես ինչպէ՞ս տես-
նամ իմ սիրելի զաւակներըս սասնկ
իրարմէ զատւած : Որդեակ , ընդ-
դիմութիւրդ ու ատելութիւրդ յաղ-
թէ . տղայութեանդ ատենը՝ գրկիս
մէջը՝ իմ կաթովս քեզ մեծցընե-
լուս համար , ու քեզ բերած ատե-
նըս՝ քաշած սաստիկ ցաւերուս
համար , մէկ դի ձգէ քու բարկու-
թիւնդ ու ատելութիւնդ , ու հաշ-
տըվէ՛ եղբօրըդ հետ :

Կայէն . Մ'սանկ կուզես . սասնկ թող ըլլայ :

Ե-այ . Մ'ս ինչ խնտում է . սա ի՞նչ ուրա-
խութի է . իմ արցունքներս որչափ
բաղդաւոր են եղեր : Մ'ս եղբայ-
րական սիրոյ կապը մէյմն ալ չը
քակվի : Ո՞վ սիրելի որդեակք իմ ,
հիմայ ճանչցայ որ իմին զաւակս էք :
Ս'այրական գթութիւնը յաղթեց :

Արամ . Մ'ք տար որ անանկ ըլլար , բայց . . .

Ե-այ . Ի՞նչ բանի համար կը նեղես :


ԱՄՈՒՆ. Եւ կը վախնամ, բայց պատճառը
չեմ գիտեր: Ընօրէն մարդուն խա-
ղաղութիւնը խիստ ապահով չէ՛,
անիկայ խաբէբայ ծովու մը պէս,
Թէպէտ և երեսանց խաղաղ ու հան-
դարտ կերևայ, բայց փոթորիկը
միշտ սրաին մէջը կը պահէ:

ԴԱՍ ԽԱՂԱՐԿՈՒԱՑ

Ո՞ր դուստր հպարտութե՛ ու արմատ ամեն
մալուժե՛, ինքիրեն թշնամի նախանձ չարա-
կամ, դու կը մաշէցընես զսիրտս մարդկան,
երկաթը ուտող ժանգի նման: Դու կը նմա-
նիս բուսոյ բաղեղան, որ կալուէ ու կը մաշէ-
ցընէ իւր նեցուկը և դժնարան, ո՞ր անոր, դու
պաշտպանէ՛ զմեզ անոր թոյնէն սիրաբոր-
բոք ջահիւ քոյ տղորմութեան: Դու ինքն
սէր ես, ո՞ր անձ գթութեան, ու ո՞ր սիրով
կապրի, ու սիրոյ մէջ կեանքը կանցընէ,
քեզմէ չի զտալիր, ու երջանիկ կըլլայ յոյ-
սրմհէտէ մինչև յաւիտեան:



Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ



ԿԱՅԵՆ ԵՏՔԸ ԱԲԵԼ

Կայէն. Մ¹ յի, միտքըս դրի որ զարնեմ. թող մեռնի եղբայրս, ինձի շատ դժուար կերևայ աս սուտ ու երեսանց բարեկամութիւնը անոր հետ ընել: Մ² նիկայ իմ գործքերուս հակառակ է, թող նեղի ու յաղթը վեարդարը, ու իրաւունքը ու արդարութիւր՝ բռնութե՛ ծառայութիւն ընէ: Մ³ հա անիկայ կողգայ, երեսս ուրախ ու զուարթ երևցընեմ, ու բարկութիւս ալ սրախ մէջը վառեմ բորբոքեմ, աս նենգութեան ճամբով անկից վրէժ առնեմ: Մ⁴ րեւե եղբայր:

Աբել. Մ¹ ըդեօք իրաւ է քու կի՛ն իս նորէն սիրելը, ան բարեկամութե՛ ու խաղաղութե՛ անոյշ անունը քու բերնէդ երբոր կը լսեմ նէ, որչափ կուրախանամ:

Կայէն. Մ¹ բեւ, ես առջինը չեմ, ես հիմա

բոլորովին փոխվեցայ • մեր մէջը ա-
տելուԹԷ ու բարկուԹԷ խօսքը ալ
պիտի չըլլայ • իմին անխոհեմ բար-
կուհիներըս ինծի ալ գէշ կերևնան :
Երկուքնիս ալ մէկ տեղ դաշտը եր-
թանք , ու իրարմէ չի զատվինք • ու
հայրս ալ իր խրատներուն ու յան-
դիմանուԹիւններուն պտուղը շուտ
մը Թող տեսնայ :

Աբէւ . Ըսկից ետքը մէյմըն ալ պիտի չի
զրուցես , Թէ Ըբելը միայն նոյ զոհ
կը մատուցանէ :

Կայէն . Հիմա ես ալ կուզեմ նոյ զոհ մը մա-
տուցանել • որպէս զի առաջի զոհին
պակսուԹիւր լեցունեմ ու ուղղեմ :

Աբէւ . Ե՛րբ :

Կայէն . Քիչ մը ատենէն ետքը :

Աբէւ . Ո՛ր տեղ :

Կայէն . Ըսկից քիչ հեռու դաշտ մը կայ ,
ան տեղը :

Աբէւ . Օ՛րհը ո՛ր է :

Կայէն . Պատրաստ է :

Աբէւ . Քու սիրտդ ալ պատրաստ է :

Կայէն . Պատրաստ է :

Աբէւ . Բայց զոհը՝ աստուծոյ արժանի
զոհ է արդեօք :

Կայէն . Ընոր խիստ հաճոյ ու ընդունելի է :

Աբէլ. Ո՞րն է :

Կայէն. Կիմանաս :

Աբէլ. Ե՛ղբայր , թող տուր որ ես ալ ան
ընտի՛ր զո՛հ տեսնամ :

Կայէն. Ե՛յո . կը խոստանամ . քեզի , որ
դուն ալ պիտի տեսնաս :

Աբէլ. Որով՛հետեւ միտքդ դրեր ես ընելու ,
գոնէ շուտ մը ըրէ՛ :

Կայէն. Իմին ալ միտքս ան է . վսձի քանի
որ երկնայնէ սրտիս նեղու-թիւն
կը բերէ : Երթանք :

ԵՒԱՅ , ԿԱՅԵՆ ՈՒ ԱԲԵԼ

Ե-այ . Որդեակք իմ , ո՛ւր բարով :

Կայէն . Դաշտը :

Աբէլ . Դաշտը :

Ե-այ . Որդեակք իմ , ձեր մայրը միշտ ըզ-
ձեզ ասանկ սիրով կապած տես-
նայ . ու ձեր հօրը վսխը պարապը
երթայ :

Կայէն . Ե՛ղբայր անօգուտ խօսքերով չու-
շանանք :

Աբէլ . Ե՛հա կուգամ : Մայր իմ մնաս
բարով :

- Կայէն. Դուռն նորէն կը դառնաս որ խորաթես :
- Աբէլ. Ե՛ղբայր թող տուր որ տակաւին վայրկեան մըն ալ ուշանամ :
- Կայէն. Ըտենը կանցնի :
- Աբէլ. Մայր իմ , մնաս բարով սիրելի մայր իմ :
- Եւայ . Ըբէլ , աս անսովոր ու չափազանց սիրովդ ինձի ինչ կուզես զըուցել . ձեռքըս ձեռքիդ մէջ կը սըլմես . ուշադրուք մը երեսս կը նայիս ու ետքը կը հառաչես . կը փափաքիս երթալ ու կը կենաս . կը քալես ու ետքը կը դառնաս , ու գիրկէս չես ուզեր զատվիլ . ո՛հ որդեակ իմ մի՛ պահեր զըուցէ . ինչ կուզես :
- Աբէլ . Ինչվան հիմա՝ իմին սիրա՞ն չէ՞ զգացեր . իր արիւնէն՝ այսչափ շփոթ՝ նոր շարժմունքներ . չեմ իմանար՝ զիս չեմ գտնար՝ մայր իմ գթած . զարմանալի՝ բան կերևայ՝ ինձ այս դիպուած : Ինչվան հիմա՝ դու իմ աչքիս՝ մայր իմ սիրած . այս օրվան պէս՝ այնչափ աղվոր՝ չես երևցած : Ես ուրիշ հեղձասանկ սաստիկ՝ ցաւ չեմ քաշած . երբոր քեզմէ՝ ես զատվելով՝ տեղ եմ գացած :

ԵՒԱՅ ՈՒ ԱԴԱԾ

- Ե-այ . Ո՛հ անոյշ զաւակիս անոյշ սէրը :
- ԱԴճձ . Եւայ ինչո՞ւ կը նեղես , նորէն բան մը պատահեցա՞ւ , ինչո՞ւ կուլաս . գուցէ կը վախնաս , որ չըլլայ թէ անօրէն զաւակը՝ հաշտութիւն երեսանց ըրած ըլլայ , ու ետքը եղբօրը անգթութիւն մը ընէ :
- Ե-այ . Ըսիկայ բնաւ միտքէս չանցնիր , մանաւանդ շատ ուրախ եմ :
- ԱԴճձ . Ուրախ եսնէ , ինչո՞ւ կուլաս ,

Երբոր մէկ սիրտ մը շատ նեղութիւններ մեծ վիշտ կը կրէ , իրեն կրակը մարելու համար արցունք կը թափէ : Բայց երբոր սիրտ մը՝ ուրախութենէն խաղաղ ու գոհ է , կրնայ մի ըլլալ որ նոյն խնտումը արցունքալ թափէ : Ամբողջ կատարեալ ուրախութիւն մը ո՞վ յուսայ մեզմէ , երբոր խնտումն ալ ցաւոց նշանաւ խօսիլ սորվեր է :

- Ե-այ . Ըս՛ յո՛ կողակից իմ , ես ուրախ եմ , ու ուրախ ըլլալու ալ պատճառ ու իրաւունք ունիմ , աչքիս վրայի արցունքը՝ սիրոյ արցունք է , անմեղ Ըբէլին սիրելի խօսքերը մայրական

սէրըս շարժեցին , դու ալ թէ որ
երկու եղբարց սէրը ու բարեկա-
մութիւնը տեսնայիր , ինձի պէս
կուլայիր :

Արամ . Երկու եղբայր մէկ տեղ ո՞ւր
գացին :

Եւայ . Գաշտը :

Արամ . Ո՞վ ողորմած աստուած :

Եւայ . Գու ինչո՞ւ կը հառաչես :

Արամ . Կարելի է որ կայէն աս հաշտուիլը
գէշ մտքով մը ըրած ըլլայ , վասն զի
թէ որ իրաւ ըլլար , այսչափ շուս-
չէր ըլլար :

Եւայ . Ս'եր զաւակը մարդ է , գազան չէ' :

Արամ . Ո՞՛հ , մարդը գազաններէն աւելի
գէշ է , երբոր կը սխալի , ու կը ծը-
ռի . ու չարութիւն ընելու համար
աւելի զօրաւոր զէնքեր ունի :

Եւայ . Վրուկին կասկածներըդ՝ որովքեզ
ատենէն առաջ կը տանջես , մեր ա-
ռաջին յանցանացը դժբաղդ պը-
տուղներն են : Ս'ենք զմեզ խեղճ
կրնենք , ու ապերախտուի ընելով ,
նոյ տրված պարգևները չարաչար կը
գործածենք մանաւանդ նոյ տրված
պարգևները՝ մենք մեր տանջանացը
գործիք կրնենք , ու աւելի մեծ

Թշնամին մենք մեր վրան կը կրենք :

Երբ մենք գործեցինք՝ ան մեր առաջին՝
չստ մեծ յանցանքը, ան ժամանակէն՝ ըսկը-
սաւ ծնիլ՝ մեր մտքին մէջը, մէկ անհատ-
նելի՝ գէշ մտմտութիւն՝ ու նոր պատճառ
մը, որ մեզ անհանգիստ՝ կընէ կը ձգէ՝
խեղճութե մէջը : Բռնաւոր միտքը՝ եղաւ
ինքիւրեն՝ իրեն դահլիճը, միշտ մեծ տառա-
պանք՝ կրելու համար՝ կը գտնէ նիւթ մը :
Կամ կը նախանձի՝ ան բարեկեցիկը՝ որ իր
քովը կայ, կամ կը գուշակէ՝ ան չարեկեցիկը՝
որ քովը չի կայ :

Արամ . Միկայ գիտեմ, բայց իմ վախս չեմ
կրնար յաղթել, ու մէկ գաղտնի զօ-
րուի մը իս կը բռնագատէ զաւակ-
ներուս բռնած ճամբան քննելու :

ԵՒԱՅ ՈՒ ԿԱՅԻՆ

Եւայ . Եստ իրաւ է, սա խեղճ աքսորա-
նաց մէջ, որուն որ մենք մեր մե-
ղացը համար արժանի եղանք, խա-
ղաղութի չի գտնուիր . խաղաղութիւն
աստուծ մէ խնդրելու է : Բայց սա

Էկողը Աստուծոյ ճէ՞ . Ինչո՞ւ ասանկ
 շուտ , Ինչո՞ւ մինակ ետ դարձաւ .
 ո՞հ . Ինչպէս կասկածոտ նայուած-
 քով մը շուտ շուտ չորս կողմը կը
 նայի . Ինչո՞ւ համար գողի պէս կը
 քալէ , ու ոտքը մէյ մը մեծ ու մէյ-
 մը պզտիկ կառնէ : Ասե ծառե-
 րուն տերեւներէն պզտիկ հովի ձայն
 մը կը լսէ նէ ետ կը դառնայ կը
 նայի , գոյնը կը նեւէ , ու կը դողայ :
 Ա՞ր կերթաս . Ինծ-մէ մի՛ փախչիր .
 ես Աւան եմ , մայրդ չէ՞ս ճանչնար .
 ո՞հ աս Ինչ գէշ վախ քու վրադ
 տիրեր է :

Աստուծոյ . (Աստուծոյ ուսկից գիմացս ելաւ :)

Եւայ . Սեղք Ինծի . վրադ գլուխդ բոլոր
 արիւնէ , անմեղ եղբայրդ ո՞ր թո-
 ղուցիր , աւանդ , սիրտըս կը սառի .
 դուն պատասխան չէ՞ս իտար . ո՞հ .
 անգուլթ անօրէն լուռ կը կենաս .
 հասկըցայ , իմ զաւակս , իմին մէկ
 հատիկ մտիթարութիւս Ան
 արիւնը Ա՛յլ անծ . . Ինծի օգ-
 նութիւն մը ըրէք , ես կը մեռնիմ :

Աստուծոյ . Ինչպէն որ անոր խելքը գլուխը
 գայ նէ , ես ուրիշ տեղ մը փախչիմ :

ՀՐԵՇՏԱԿ , ԿԱՅԵՆ ՈՒ ԵՒԱՅ

Ջրէշ . Կայէն կայնէ . եղբայրդ ո՞ր է :
Կայէն . Չեմ գիտեր , ես եղբօրբս պահա-
պանը չեմ :

Ջրէշ . Ի՞նչ ըրիր , անօրէն կը յուսաս որ
ըրածդ աստուծմէ պահես , դու կը
կարծես որ անձ՝ լեզուով խօրաթ-
ված խօսքերուն ձայնը միայն կը
լսէ . անձ ամմէն բան կիմանայ , ամ-
մէն բանին ձայնը կը լսէ : Եղբօ-
րդդ արիւնին ձայնը ինչպան երկին-
քը ելաւ , ու յաւիտենական աթո-
ռոյն առջևը կայներ է , անոր խաբ-
ված անմեղութիւր ան տեղը կուլայ
ու կողբայ . ըրած յանցանքըդ կը
պատմէ , հատուցում կուղէ . Եւբեւ
քեզի ի՞նչ գէշութիւն ըրաւ , դու
այ ըրած պարգևներուն համար
միայն Եւբեւը ատեցիր . ու բոլոր
քու կատաղի բարկութիւդ եղբօրդ
վրայ թափեցիր : Կնա՞ ու անիծ-
եալ եղիր երկրի վրայ , ան երկրին
վրայ որն որ քու ձեռքըդ արիւ-
նով թրջեց :

Կայէն . Ո՞վ սոսկալի ու զարհուրելի վճիռ ,

ուրեմն ինձի ինչ պիտի ըլլայ :
 Որովհետեւ սասանկ փախստական ու
 թափառական պիտի ըլլամ նոյ երե-
 սէն իյնալու համար , ալ աղէկ է
 որ լոյսը ու արեւը ու ես իս չը տես-
 նամ , ու ով որ ինձի հանդիպելու
 ըլլայ նէ իս մեռցընէ :

Հրէշ . Չէ՛ չէ՛ սա բանէն մի վախնար , մա-
 նաւանդ թէ՛ սա բանը մի յուսար .
 մեռնիլը՝ խիստ կարճ պատիժ կըլ-
 լայ , անօրէն մարդուն դժբաղդ-
 կեանքը՝ թող ուրիշներուն օրի-
 նակ ըլլայ :

Դու պիտի ապրիս՝ բայց միշտ մտքովդ՝
 պիտի տանջուիս , միշտ քու վնձակիդ ու
 բաղդիդ համար՝ պիտի երկբայիս : Դու
 պիտի ապրիս բայց անանկ կեանք մը պիտի
 անցընես , որ մահը կեանքէն աւելի լաւ է
 դու պիտի ըսես : Ու պարապ տեղը քըր-
 տինքովդ հողը դու պիտի թըջես , փուճ
 տեղը հողէն քու աշխատանքովդ օգուտ
 փնտռես : Քանզի երկիրը՝ քու փափա-
 քանացդ դէմ պիտի կենայ , բնաւ մէկ շահ
 մը բնաւ պտուղ մը՝ քեզ պիտի չի տայ :

Կայէն . Ս՛եղբ ինձի , ո՛հ որպիսի սոսկալի
 անդուանդի մէջ ինկեր եմ , ո՛ր խո-

ուոջը ու ծակը այ բարկութեն իմ
 պիտի պահէ ու ծածկէ . փախչիմ .
 բայց ինչպէս փախչիմ , ոտվընէրըս
 կը դողան , ու ուժ չունին իս վեր-
 ցընելու . ո՛ւր փախչիմ որ իմին դա-
 Տիճս իմին սրտիս մէջը կեցեր է :

Եւայ . Ո՛ւր ես

Կայէն . Ի՛նչ ընեմ : Մայրըս նորէն լոյս
 կը տեսնայ :

Եւայ . Ը՛բեւ

Կայէն . Ո՛վ անո՛ւն , ինչպէս իս սաստիկ կը
 յանդիմանես :

Եւայ . Ը՛նձորէն , զաւակս քեզմէ կուղեմ :

Կայէն . Ո՛՛հ մայր իմ . դո՛ւն ալ կուղես իմ
 սիրտս ծակել :

Եւայ . Ինձի մայր կը կանչես , ասկից ետքը
 ա՛լ ես որո՛ւն մայրն եմ : Երկու զա-
 ւակս ալ մէկէն կորսնցուցի : Ը՛բե-
 վը մեռաւ , Կայէնն ալ յանցաւոր
 եղաւ . ողջ զաւակիս կորսը վիւր , մե-
 ռած զաւակիս մահէն՝ աւելի գէշ
 ինձի կերևնայ :

Կայէն . Ը՛լ մի՛ զրուցեր :

Եւայ . Ինչպէս կը ցար ան սոսկալի յան-
 ցանքը ու գործքը կատարել . ինչ-
 պէս սիրտդ դիմացաւ տեսնալու հո-
 գեվարք Ը՛բելին երեսը ու շարժ-

մուկքը , ինչպէ՞ս զարնելու ասե-
 նրդ՝ ձեռքըդ չի շփութեցաւ , ինչ-
 պէ՞ս ան միջոցին մէջը արիւնդ չի
 պաղեցաւ , քու հօրդ սիրոյն ու
 մայրական խնամոցըս վարձքը ու փո-
 խարէնը ան պիտի ըլլայ : Ասկից ետ-
 քը՝ երախտագիտութի՛ն , հաւատար-
 մութի՛ն , սէր ու գթութի՛ն ուսկից յու-
 սալու է , և ո՞ւր գտնալու է , մեղք
 քու հօրդ ու մօրդ :

Կայէն . հէրիք է . հէրիք է , ես իմին խեղճ
 ու ողորմելի վիճակս գիտեմ , անցա-
 ծը՝ ինծի յուսահատութի՛ն կը բե-
 րէ , ներկայն՝ իս կը տանջէ , ու գա-
 լեքն ալ՝ իս շատ կը վախցընէ : Ամ-
 մէն առարկայի մէջ իմ պատիժս կը
 գտնամ , ու իմ աչքիս անանկ կե-
 րեաց որ բոլոր մարդիկ ու երկնայ-
 ին զօրութի՛նները պատրաստըվեր են
 իս տանջելու : Յոյսըս աստուծմէ
 կտրեր եմ , անիկայ կամ չուղեր
 կամ չի կրնար իմ վրաս գթալ : Աս
 շատ աղէկ հասկըցեր եմ որ իմին
 ըրած մեղքըս յաւիտենական ողոր-
 մութենէն ու գթութենէն շատ
 մեծ է :

Ես իմ յանցանքս՝ լաւ խնայեւ եմ ,
 ու ի՛նչ ըլլալս՝ աղէկ ճանչցեւ եմ .
 բնաւ թողուծի՛ն՝ ներում ո՛չ խնդրեմ ,
 և ո՛չ գթուծիւնն՝ ալ յուսալ կարեմ :
 Գէշ խղճմտանք մը՝ սիրտս կը խոցէ ,
 բրած չարութիս՝ միշտ զիս կը ասանջէ .
 ուշ զղջում ընե՛լ՝ բնաւ ո՛չ օգնէ ,
 անմեղ ըլլալուն՝ ատենն անցեւ է :

ԵՒԱՅ , ԵՏԻՐ ԱԴԱՄ

Եւայ . Ընօրէն սուտ է զրուցածդ . այ
 գթուծի՛ր մեր ամէն յանցանքէն
 մեծ է : Ըպերախտը կը փախչի , ու
 չուզէր խօսքըս մտիկ ընել : Ինչ-
 պէս աւողջուծիւն պիտի գտնայ ,
 երբոր ամէն դեղէն կը զղուի :
 Ըւանդ . ի՛նչ կը տեսնամ . Ըգամ ,
 ինչպի՛սի ցաւալի բեռով կը դառ-
 նաս կուգաս ինձի . սա տժգոյն
 մարմինը՝ անմեղ Ըբելին մարմինը
 չէ՞ արդեօք . հաղիւ կրնամ զանի
 ճանչնալ . ո՛հ որդեակ իմ , ինչպէ՛ս
 կորսնցուցեւ ես քու կինն առջի
 կերպարանքդ քու եղբօրդ արեան-
 արբու կատաղուծեանը պատճա-

ուաւը , ան կուրծքին վրայ կախված
 դեղնած երեսը , որուն վրայ դեռ
 կը տեսնուվին փոշիով ու քրտինքով
 խառնած արցունքի ճամբաները ,
 ու ան իրարու մօտ խոցի կապուտ
 նշանները՝ ու ան անմեղ արիւնը ,
 որ տակաւին տաք տաք կը կաթի ան
 խոցերէն , ասոնք ամմէնը իմ միտքըս
 կը բերեն քուկին քաշած տան-
 ջանքներդ , կայէնին յանցանքը , ու
 իմին ողբալի վիճակս : Ո՞վ մեծ յան-
 ցանք , ո՞վ անմեղ արիւն , ո՞վ դառն
 յիշատակութի , ո՞վ ցաւալի մաս :

Ասանկ անողորմ՝ խեղճ տեսարանը ,
 թէ որ չի ճրմէ մարդու մը սիրտը :
 Ան մարդը չկտէր ի՞նչէ գթութիւն ,
 ան չունի բնաւ մարդասիրութիւն :
 Քանզի երկրագունտ բոլոր կը դողայ ,
 արեւը տժգոյն երկինք կը սոսկայ :

Արամ . Եւայ , մենք հիմա ո՞րչափ մեծ
 պատճառ ու իրաւունք ունինք լա-
 լու ու ողբալու : Ի՞նչ աղէկ գի-
 տես որ ի՞նչ մասը չըստեղծեց , ու
 ի՞նչ չուզէր մարդուս մեռնիլը ու
 կորսուիլը : Ի՞նչօրէնները մասը խօս-
 քով ու գործքով կանչեցին , ու

աշխարհք մըացուցին • ու ամենէն
առաջ մեր յանցանքը՝ ան արգելած
ճամբուն դուռը բացաւ :

Եւայ • Իրաւ է , իրաւ • սա ահագին տան-
ջանաց ու չարչարանաց պատճառը
մենք ենք : Ընիկայ մեր մեղացը
պատիժը քաշէց • ու անոր յանցան-
քը՝ միայն արդար ըլլալն էր : Ըայց
տէր իմ ինչո՞ւ թող կուտաս որ ար-
դարը այսչափ նեղի ու ասնջովի :

Արամ • Ը յայիսի մեծ դիպուածը՝ հար-
կաւորապէս գաղանի խորհուրդ մը
պիտի ունենայ : Ինչպէս որ արևը
ամպերուն մէջէն կերևայ , այնպէս
ալ սա դիպուած իս ծածուկ միտ-
քը՝ յետագայ ժամանակին ստուեր-
ներուն մէջը կը տեսնամ : Ա՞յլ ճըշ-
մարիա Ըբէլ որ ընտրվեր էս գնե-
լու համար գերի մարդկութիւնը
քուկին պատուական արիւնովդ , էս
զքեզ քու պատկերքիդ մէջը կը
տեսնամ ու կը ճանչնամ : Երանի մեր
թուանցը , որ շատ դարերէն ետքը
պիտի ծնանին • վս զի անոնք առանց
վարագուրի , այ խորհուրդներուն
խորին ճամբաները , յայտնապէս
պիտի տեսնեն :

ԴԱՍ ԽԱՂԱՐԿՈՒԱՅ

Կըլսօսի մեռած՝ անմեղ Աբելն այն ,
 ու իր արեանը՝ բարձրաբարբառ ձայն ,
 զեղբայրաստանէն՝ կըլսյ ամբաստան , որվ
 մահկանացուք՝ մեղի է այս խորհրդաւոր բան :
 Ամենքս մասնակից՝ մեղաց մոլութեան ,
 բայց չեմք մասնակից՝ ցաւոց և զղջման :
 Ամենքը խօսքով՝ կարհամարհեն՝ անօրինաց
 ճամբան , բայց ամենքը՝ գործքով՝ նոյն
 ճամբան մտնալ՝ կը բողձան . Կայենը կա-
 տեն , բայց կայենութիւնը բնաւ չեն տես-
 նար՝ իրենց վարուց մէջ՝ ու իրենց վրան :



Ի Ս Ա Ն Ա Կ

ՆՍԱՆՈՒԹԻՒՆ ՓՐԿՉԻՆ

Դ Ե Ր Ա Ս Ա Ն Ք

ԱԲՐԱՀԱՄ :

ԻՍԱՀԱԿ :

ՍԱՌԱ :

ԳԱՄԱՐ . *Խոսհանայ ընկերը :*

ՀՐԵՇՏԱԿ :


ԴԱՍ ՃԱՌԱՅԻՅ ԵՒ ՀՈՎՈՒԱՅ :

Ս Գ Ն Յ Ս Գ

Յ Գ Ը Ս Գ Ք Յ Ի Գ Գ Ի Ո Յ Գ Յ Ս Գ



Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն



ԱԲՐԱՀԱՄ ՈՒ ԻՍԱՀԱԿ

Աբր^ա • Տղայ • այսչափրս հերիք է • վասն զե
այնչափ խօսքի բռնավեր էնք որ
կէս գիշերը անցեր է , ու չէնք իմա-
ցեր • պատճառը ան է որ դուն բան
իմանալու ու սորվելու շատ փափաք
ուներս • էս ալ կուզեմ որ քու ամ-
մէն հարցմունքիդ պատասխան տամ
ու փափաքըդ լեցընեմ : Գնա սի-
րելի Խասհակս , գնա այսչափս հե-
րիք է , պէտք է որ երթանք քնա-
նանք , ու հանգչինք : Մնացածը
ուրիշ հեղ քեզն կը պատմեմ :

Իսահ^ա • Ո՞վ հայր իմ • երբոր հրամանքըդ
գլուխդ եկած զարմանալի բաները
ինձի կարգաւ կը պատմես նէ , սիր-
աբս այնչափ կը զուարճանայ որ ,
բնաւ չեմ ձանձրանար , ու քունը
ու հանգիստս չեմ մտմտար , ու զիս
ինքն բոլորովն կը մոռնամ : Ըն
դիպուածները պատմած ատենըդ :

խելքըս գլխէս կերթայ , ու կար-
 ծեմ թէ ես ալ քեզի հետ ան դիպ-
 ուածներուն մասնակից եմ : Արբոր
 դուն նոյ խօսքին հաւատալով՝ բնիկ
 հայրենիքըդ կը թողուս , ես ալ քե-
 ղի հետ Վաղդէացոց դաշտերը կը
 ձգեմ , ու քեզի հետ Արառանու ,
 Վաղէստինի լեռներուն ու ան-
 տառներուն մէջը պանդխտութիւն կը
 բնակիմ : Արբոր կը լսեմ որ հե-
 ոու տեղիւնք կերթաս կերակուր
 փնտռելու համար , ես ալ քեզի հետ
 մէկ տեղ Վերարա ու Ագիպտոս
 կերթամ : Արբոր ան թագաւորնե-
 րը կը յաղթես , ու ոտքիդ տակը
 կառնես , ես ալ քու յաղթութիւնդ
 ետեւն կուգամ : } որդանանու ե-
 ղերքը : Բայց երբոր նոյ խոստ-
 մունքները կը պատմես , ու ձեր մե-
 ջը եղած հաստատուն դաշինքը կը
 մեկնես նէ , անիկայ անանկ իմ աչ-
 քիս առջևը կը բերես որ կարծեմ
 թէ անոր յաւիտենական խօսքերը
 ու ձայնը կը լսեմ , ու սիրտըս կը
 դողայ : Ահ բոլոր քուկին կենացդ
 ընթացքը՝ ինծի մէկ մեծ դպրոց ու
 սուսմտարան մընէ : Վու գործ-

քերուդ մէջը՝ իմ գործքերուս օրինակը կը գտնեմ: Ըն սքանչելի ու անսովոր դիպուածքներուն մէջը՝ անձային խորհրդոց գաղանի ճամբաները կը տեսնեմ: Քեզի ըրած մեծ ցուցանքներուն ու առատ պարգևներուն մէջը՝ անոր մեծութիւնը կը տեսնեմ: Ո՞վ հայր իմ նաև կը տեսնեմ, թէ անոր շատ սիրելի ես. ու շատ բան կ'իմանամ ու կը սորվիմ:

Աբրահամ • Ընդէկ գիտեմ որ քեզի հետ խօրաթած ատենըս, սերմը՝ ապերախտ ու անպտուղ երկրի մը վրայ չեմ ցաներ: Բայց դուն գնա՛, վասն զի աս գիշեր շատ

Իսահակ • Ո՞վ տէր իմ, ան օտարական հիւրին գուշակութիւն ետքը, որուն վրայ մայրըս խնդաց, ինչ պատահեցաւ: Կողաչեմ քեզի ասիկայ ալ զրուցե՛ կերթամ:

Աբրահամ • Դիպուածը՝ քիչ ատենվան մէջ անոր գուշակութիւնը ստուգեց: Սառա քիչ ատենէն ետքը յղի մընաց, ու նոր զուակ մը բերաւ:

Իսահակ • Ընդդէօք ան զուակը ես եմ:

Աբրահամ • Ըն յո՞ զուակս. քու ծնունդդ բընուութե՛ դեմ հրաշք մը նէ, վասն զի

- բնուիր իր կարգը ամբէց, դուն չոր-
ցած ծառի մը սքանչելի պտուղն էս :
- Իսաս՜ . Ու աստուծոյ խոստմունքը . . .
- Աբրա . Ու նոյ խոստմունքը քու վրայդ կը
մեկնըվի . ու քեզմէ ծնածներուն
վրայ պիտի կատարի : Այ երկիրը ,
որուն վրայ դուն հիմա օտարականի
մը պէս պանդխտաբար կը պտըտիս ,
Նեղոսէն ինչվան Ափրատ գետը ,
քու կին որդւոցըդ ու Թոռանցըդ
իշխանութիւնը տակը հպատակ պիտի
ըլլայ :
- Իսաս՜ . Ուրեմն իմին զաւակներըս . . .
- Աբրա . Արկնքի աստղերէն , ու ծովուն
աւազէն շատ պիտի ըլլան : Ա՛ճ՝ ա-
նոնց իմ սիրելի ժողովուրդս են
պիտի ըսէ , անոնց համար հրաշք-
ներ պիտի ընէ , անոնցմէ Թագա-
ւորներ ու իշխաններ պիտի ըլլան ,
ու բոլոր աշխարհքիս բնակիչները
մեզմով պիտի օրհնըվին :
- Իսաս՜ . Ա՛յլ փառացս , ո՛րք բարեբաղդ եր-
ջանկութեանս :
- Աբրա . Ա՛յլ որդեակ իմ , այսչափ փառքի
համար մի՛ հպարտանար . շատ հեղ
ուրախութիւն ու զուարճութիւնը՝
յանցանք մընէ , վն զի երբեմն օճը՝

չարակամ հպարտութիւն մը՝ ուրախութիւն մէջը կը պահանջուի, ու նոյն շնորհքները թոյնի կը վերածուի:

Իսահ . Չէ՛ չէ՛ . իմ հոգիս ասանկ ժամտախտէն ազատ է . կզգամ որ . . . բայց կարելի է որ խաբւիմ ու սըխալիմ: Սարդ մը զենքը աղէկ մը չի ճանչնար: Ա՛հ . հայր իմ . դուն աս խօսքըս միամտութիւն չի զրուցեցիր: Գու՛ն իմ սիրտըս կը դողացընես:

Աբրահ . (Ա՛յ սուրբ երկիւղ , աղբիւր առաքինութեան :)

Իսահ . Մէն՛ջ , պատտախան չէ՞ս իտար , ո՞վ սիրելի հայր իմ ինձի ողորմէ՛ . թէ որ ճամբէն դուրս ելայնէ , կորսընցուցած ճամբաս ինձի ցուցնուր . ահա քու կին ոտքըդ կիյնամ . . .

Աբրահ . Իսահակ ոտքի վրայ է՛լ . եկո՛ւ քեզ գրկեմ . ապահով եղի՛ր . հայրդ քեզ խրատ կուտայ , քեզմէ չի գանդատիր: Սանաւանդ՝ քու կին ասանկ խոհեմ տարակոյսդ՝ այնչափ իմէն սիրտըս շարժեց որ աչքէս արցունք կուգայ: Գնա՛՛ որդեակ իմ , նա՛ք քեզ միշտ ասանկ պահէ՛:

Իսսհ . Ո՛հ . Թէ որ իմ հողիս՝ իր մաքրութիւնը՝
 պիտի արատէ , սիրելի հայր իմ՝ . քու գը-
 թութքդ՝ դուն ինձի օգնէ : Դուն պատ-
 ճառ եղար՝ որ ես աշխարհք գամ՝ մօրմէս
 ծնանիմ , դուն պատճառ եղեր՝ որ սա աշ-
 խարհքէս՝ ես նորէն զատվիմ : Թէ որ իմ
 սիրտըս՝ չըզգայ բնաւ իր՝ անմեղութիւնը ,
 Թէ հողիս չըզգայ՝ ան անասելի՝ իր մաքրու-
 թիւնը . ինձ մահ կը սեպվի՝ այնպիսի կեան-
 քը՝ անանկ ապրիլը , ու իմին անձըս՝ չե
 կրնար քաշել՝ այնպիսի վարքը :

ԱՐՐԱՀԱՄ , ԵՏՔԸ ՀՐԵՇՏԱԿ

Աբրհ . Ո՞վ բարեբար անձ , քեզի ինչպէ՞ս
 ու ի՞նչ խօսքերով շնորհակալութի
 ընեմ ինձի ըրած այնչափ պարզե-
 ներուդ համար : Ես ծերութեանս
 առեմը՝ ինձի զաւակ մը տալը՝ ին-
 ձի մեծ աղէկութիւն մընէ , բայց
 անանկ զաւակ մը տալ , որ ինձի յոյս
 ըլլայ ու ինձի անուշ մխիթարութի
 մը ըլլայ , անիկայ անանկ պարզեւ մը
 նէ , որ . . . բայց աչքիս երեցածը՝
 ի՞նչ լոյս է : Ես որ ինչպէ՞ս շուտ
 առատ եղաւ . չէ՛ չէ՛ . արեւը սասնկ

պայծառ լոյս չունի . ճօնչցայ ան
ճառագայթները . հասկըցայ ո՞վ է
էկողը :

Հրէշ . Մ.բրահամ . Մ.բրահամ :

Աբր^տ . Հրամմէ . ահա ես քու ծառադ եմ :

Հրէշ . Ս՝տիկ ըրէ՛ . յաւիտենական աս-
տուծմէ քեզի հրաման բերի . առ
քու զաւակդ , մէկ հաօիկ սիրելի
Խասահդ , ու անոր հետ մօրենին
գնա՛ . ու ան իր հրամայէ որ հոն
տեղը դուն զանի քու ձեռքովդ
կտրես , ու իրեն զոհ մատուցանես :
Ու ան լեռներուն ո՞րը աս փառքին
արժանի է նէ , ես քեզի նշանով մը
կը հասկըցընեմ :

Ան անմեղ տղադ՝ որ քեզ աստուծմէ՝ աղ-
վոր պարգև է , ան աղվոր տղադ՝ որ քեզի
այնչափ՝ շատ սիրելի է , զանիկայ աստուած՝
այսօրվան օրըս՝ զան քեզմէ կուզէ : Աուզէ
որ դուն քու՝ աչքովդ անոր՝ մեռնիլը
տեսնես , կուզէ որ դուն քու՝ ձեռքովդ
անոր՝ արիւնը թափես , դուն որ քու տը-
ղուդ՝ կենդանութե՛ր՝ պաաճառ եղեր ես :

Աբր^տ . Ո՞վ յաւիտենական ան . աս ի՞նչ
անակնկալ ու սոսկալի հրաման է :
Դուն կուզես որ իմ զաւակըս քեզի

զո՛հ ընեմ՝ ու նոյն հրամանին մէջն
 ալ անոր պատիւը ու յարգը ինձի
 կը յիշես, ու ինձի անանկ խօսքեր
 կը կրկնես, որ աւելի իմ սէրըս կը
 շարժեն: Բայց . . . բայց որովհե-
 տև դուն ասանկ կը հրամայես, հե-
 րիք է: Վլուխս կը ծուեմ, ու քու
 հրամանիդ երկրպագութի՛ կընեմ,
 ու անոր արիւնը կը թափեմ: Բայց
 Խասհակը մեռնինէ, ան յոյսերը
 ո՛ւր կը մնայ: Ըն խոստմունքները՝
 անրդեօք աս հրամանին դէմ չեն:
 Չէ՛ դուն չես կրնար սուտ զրու-
 ցել, ու ես պէտք է որ քեզի հնա-
 զանդուութի՛ ընեմ: Տարակուսիլը՝
 յանցանք է . ու ասանկ մեծ խոր-
 հուրդը քննելն ալ յանցանք է: Ա՛յ
 անձ իմ քեզի կը հնազանդիմ, կը
 հաւատամ ու կը յուսամ: Բայց
 ան սոսկալի վայրկեանին մէջը, ո՛վ
 տէր իմ ինձի օգնէ՛: Ես պատրաստ
 եմ ու կուզեմ աս գործողութի՛րը
 ընելու, բայց կտրելու ատենը՝ ո՛վ
 գիտէ, կարելի է որ անոր շարժ-
 մունքներէն սիրտս ոտք ելլայ ու
 տակն ու վրայ ըլլայ, ու թէ որ
 ինձի ուժ չի տասնէ, կարելի է որ

ձեռքըս դողայ • դուռն արէկ գիտես
որ ես մարդ եմ ու հայր եմ : Ուս-
ուաներ , հովիւներ ո՞ր էք :

ԳԱՄԱՐ , ՀՈՎԻՒՆԵՐ ՈՒ ԱԲՐԱՀԱՄ

ԳՊՄ • Ի՞նչ կը հրամանէս :

ԱԲՐՊ • Իսահակը • • • քնանալէն • • (ո՞վ
աճ իմ) թող արթննայ : Եւ շը քա-
շեցէք • երկու հոգի պատրաստ ըլ-
լան որ ետեւէս գան :

ԳՊՄ • Տէ՛ր իմ • գլխուս վրայ :

ԱԲՐՊ • Ս՛տիկ ըրէ՛ :

ԳՊՄ • Ի՞նչ կուզես :

ԱԲՐՊ • Ես եւ որ Սառան քու ձայնդ չի
լսէ • անոր հանգստուիլ մի ավերէ :

ԳՊՄ • Չեռքես եկածին չափ կը զգու-
շանամ :

ԱԲՐԱՀԱՄ , ՀՈՎԻՒՆԵՐ , ԵՏՔԸ ՍԱՌԱ

ԱԲՐՊ • Իմա անոր աս բանը չեմ իմացը-
նէր • որպէս զի մայրական ցաւը ու
կսկիծը զենքը չի ասանջէ : Ուշ

աստեն . . . Ո՞վ անձ իմ . . . անիկայ
կուգայ . ինչ զրուցեմ :

Մ . . . Մ . . . Երաժամը ինչո՞ւ համար ասանկ
կանուխ ելեր է . նոր հոգ մը ունի
արդե՞ք :

Աբր . Սառա . պէտք է որ այ մարդուր զո՞ճ
մը մատուցանեմ . ան չոր ոստերը որ
սեղանին վրայ պիտի պրին , կու-
գեմ որ երթամ քովի անտառէն զա-
նոնք ձեռքովըս ընարեմ ու փրցը-
նեմ . իս խօսքի մի բռներ , մնաս
բարով :

Մ . . . Մ . . . Ես ալ մէկ տեղ չե՞մ կրնար գալ :

Աբր . Զէ՛ . աս հեղ աս տեղը կեցի՛ր :

Մ . . . Մ . . . Ինչո՞ւ համար . այսչափ տարի է որ՝
քուկին ուրախութե՞ղ ու նեղու-
թեանդ մէջը՝ քեզն ընկեր եղայ .
հիմա պէտքը չե՞ որ քուկին ար-
դիւնքներուդ ալ մասնակից ըլլամ :

Աբր . (Վանգատ ընելու իրաւունք ունի .
ասանկ մեծ վարձքը ու արդիւնքը
պէտքը չէ՛ որ անկից պահեմ . աս ծա-
ծուկ ու գաղանի բանը թող ան ալ
իմանայ) Հովիւներ հեռու գացէք
ես Սառային խօսք մը ունիմ զրու-
ցելու : (Ո՞վ անձ իմ՝ անոր սիրտը
ու իմ խօսքերըս գուն ուղղէ՛ ու

կառավարէ՛ ։)

Ս^{առաջ} • (Մարդէ՞ք ինչ պիտի զըուցէ ։)

Աբր^ա • Սիրելի կողակից իմ • անքեզի որ-
չափ շնորհքներ ըրաւ նէ , ըսէ ին-
ծի , ամմէնն ալ միտքդ է , զանոնք
բնաւ կը յիշէս ։

Ս^{առաջ} • Ինչպէս կրնամ մոռնալ ։

Աբր^ա • Ինոր շնորհակալ ես ։

Ս^{առաջ} • Ինիկայ իմ սիրարս աղէկ կը տեսնէ ։

Աբր^ա • Իայց քուկին շնորհակալութիւնդ
փորձելու համար , անիկայ քեզմէ
դժուար բան մը ուզելու ըլլայ նէ ,
կուտաս ։

Ս^{առաջ} • Ուրախութե՞ք ու բոլոր սրտով ամ-
մէն վտանգը ու դժուարութիւնը
յանձս կառնեմ • կեանքս կուտամ ։

Աբր^ա • Ինէ որ զաւակդ ուզէ՞նէ ։

Ս^{առաջ} • Իսահակը ։

Աբր^ա • Իսահակը ։

Ս^{առաջ} • Ո՛հ • կարելի է որ անոր ցաւէն
մեռնիմ • բայց ով որ զանիկայ ինծի
տուաւ նէ , նորէն անոր կուտայի ։

Աբր^ա • Ուրեմն • Սառա՛ • տա՛ւր զանիկայ •
անքեզի կուզէ ։

Ս^{առաջ} • Իստուած զանիկայ կուզէ՞ ։

Աբր^ա • Հրամայեա • ես զանիկայ այ զո՛հ
պիտի ընեմ • ինծի անանկ հրամայ-

էց • ու հրամանը ետ չի դառնար :
 Սառսառ • Բ'բրա՛համ • Ի՛նչ կը զրուցես • հիմա
 խելքըս կը կորսընցընեմ • Բ՛ճ Ի՛նչ-
 պէս կուզէ անոր մեռնիլը որ ինքը
 անիկայ մեզի պարզէ ըրաւ , ու
 զանիկայ այնչափ կը սիրէ • ու անի-
 կայ այնչափ մեծ ժողովուրդներու
 հայր պիտի ըլլար : Բայց ինչպէ՞ս
 ու ինչո՞ւ համար :

Աբրահամ • Բ՛ճ այնչափը ինձի չի յայտնեց : Սա-
 առա՛ , երբ որ նոյ բերնէն մեզի մէկ հը-
 րաման մը կուգայ նէ , պէտք է որ
 առանց վիճելու՝ անոր հնազանդ ինք :

Սառսառ • Ուրեմն՝ Խասահակը քիչ ատենէն
 ետքը

Աբրահամ • Սեղանին վրայ պիտի իյնայ :

Սառսառ • Ու իր հայրը . . .

Աբրահամ • Ու իր հայրը զանիկայ իր ձեռքովը
 պիտի ընծայէ : Ա՛յլ կողակից իմ
 թէ որ կուզես դուն ալ աս ար-
 դիւնքին մասնակից ըլլաս • դուն ալ
 փափաքով ան մեծափառ գործու-
 ղու թի՛ր եկո՛ տես : Բայց ես քու-
 կին հոն տեղը գտնելիլդ չեմ ու-
 ղէր • վասն զի մայր ըլլալով կարելի
 է որ սիրարդ չի դիմանայ : Մնաս
 բարով : Խասահակին բան մը մի՛ զը-

րուցեր . չըլլայ թէ իմանայ : Պէտք
 է որ անիկայ ինծմէ իմանայ
 Մշակ . դուն կուլան . ո՛հ . աս որ-
 չափ արցունք է որ մէկէն ՚ի մէկ
 հեղեղի պէս աչվըներէդ կը վազէ :
 Ա՛յ կողակից իմ աս բանըս մըներ .
 այսչափ ցաւիլը աղէկ բան չէ՛ . քեզ
 ասանկ մի՛ ձգեր . ես աղէկ գիտեմ
 որ դուն նայ հնազանդ ես . ու սիր-
 տըդ՝ անոր հրամանին դէմ չի դը-
 ներ . բայց այսչափը հերիք չէ՛ :
 Ղշմարտ հնազանդը ո՛չ միայն խո-
 նարհ ու պատրաստ ըլլալու է , այլ
 նաև արիութի՛ն ու հաստատ առա-
 ջադրութի՛ն ունենալու է : () օրա-
 ցիւր . թէ որ մէկ բանը ուղեւոր
 ընեսնէ , անծ ողորմած է իրեն շը-
 նորհ.քովը քեզի օգնութի՛ն կընէ .
 ու իրեն շնորհ.քը քեզի արդիւնք
 կըլլայ : Բու՛ն մտմտա՛ որ անծ մեզ-
 մէ աղէկ գիտէ թէ , ո՛ր բանը մեզի
 օգուտ է , ու ո՛ր բանը մեզի վնաս
 է : Հարստութի՛ւր , փառ.քը , կեան-
 քը , զաւակները , ամմէնն ալ նայ
 պարգևներն են . ասոնք երբոր իրեն
 կուտանք նէ , մենք բան մը չենք
 կորսընցըներ :

Դուռն հանդարտ որտիւ՛ զուարթ երեսով՝
միշտ ուրախ կեցիր, ու միշտ նոյ՛ն հնազան-
դեւո՛ւ՝ դու պատրաստ եղի՛ր: Աս բարի
հոգը՛ ամեն զոհերէն՛ աւելի մեծ է, նոյ
առջին՛ քան զպատարագս՛ ընդունելի է:
Ով որ նոյ՛ մէկ պատարագ մը՛ կը մատու-
ցանէ, անոր աթոռին՛ այլոց արիւնը՛ նա
միշտ կընծայէ: Բայց ով որ անշուշտ՛ անոր
կամացը՛ միշտ հնազանդ է, իր յատուկ կամ-
քը՛ աստուծոյ առջին՛ ընծայ մը կընէ:

ՍԱՌԱ, ԵՏՔԸ ԻՍԱՀԱԿ, ՈՒ ԵՏՔԸ
ԳԱՄԱՐ ՈՒ ՀՈԳԻՒՆԵՐ

Սառա. Ուրեմն ո՛վ ցաւագին ու խեղճ
մայր, քիչ ատենէն ետքը ալ մայր
չես: Մնոր արդար ու խոցած սիր-
ար՛ իրեն բոլոր անմեղ արիւնը սե-
զանին վրայ պիտի թափէ՞: Ո՛հ կար-
ծեմ թէ հիմակվընէ ան սուրբ իմ
սիրարս կը խոցէ: Ո՛վ յաւիտենա-
կան հայր • իմ ցաւս քեզի ընդու-
նելի ըլլայ • Մն զոհը առաջ իմ սրբ-
տիս մէջը սկսաւ: Ո՛հ • կարծեմ
թէ իմ ցաւըս՛ ուղած արիւնէդ
պղտիկ զոհ չէ՛:

Իսասհ . Մ'այր :

Սասաս . (Ինչպէս ըսեմ սա անուներ , ու ինչպէս տեսնամ ան գէմբըր :

Իսասհ . Մ'բրահամ հայրս ո՛ր է . քովդ չէ . երթամ փնտուեմ :

Սասաս . Ի՛ս մտիկ ըրէ . (ո՛վ ան ինծի ուժ տուր :

Իսասհ . Գուռն չէս գիտեր որ հիմա զո՛հմը կը պատրասարվի . ու ես հոն տեղը պիտի գտնուիմ :

Սասաս . Գիտեմ , զաւակս . գիտեմ :

Գամ . Իսահակ ինչու կուշանաս . շուտ ըրէ . Մ'բրահամ քեզ կուղէ :

Իսասհ . Մ'հա կուգամ . Մ'նաս բարով սիրելի մայր իմ :

Սասաս . Ո՛հ . կայնէ՛ (կը մեռնիմ) իս սասնկ մի՛ ձգեր :

Իսասհ . Ինչու սասնկ կը նեղես ու սասնկ կուլտա :

Սասաս . Ո՛հ . ես առանց զաւակի մնացի :

Իսասհ . Բայց ես կը գառնամ կուգամ : Միթէ՞ ասիկայ առջի հեղն է որ քեզ մինակ կը ձգեմ :

Սասաս . Բայց սա հեղ . . . Ո՛վ ան իմ . անրդեօք իմ տանջանքիս նման՝ տանջանք քաշող եղեր է :

Իսասհ . Գամար ինչ ընեմ , անրդեօք հօրըս

Տրամանը կատարեմ. չէ նէ մօրս ցաւը
 նայիմ . երթալ ալ կուզեմ, կենալ
 ալ կուզեմ: Ա՛յ սիրելի Վամար .
 դու որ ինչպան հիմա իմ սիրելի ըն-
 կերս էիր, դուն իմ տեղըս՝ մայրս
 հոգա՛ ու նայէ՛: Վանի որ ես հե-
 ոու եմ, դուն անոր խորհրդով ու
 գործքով օգնութիւն ըրէ՛: Ա՛յր
 իմ ինչպան որ ես դառնամ նէ, ահա
 ասիկայ քեզն զաւակ ըլլայ:

Սառս. Վս ինչպէս հոգ է . աս ինչպէս
 սէր է:

Իսահ. Բայց դուն տակաւին կուլան:
 Բայց ես ինչ ընեմ: Վիտես որ
 հայրս կուզէ . . .

Սառս. Ե՛րբ . գնա՛ զաւակս գնա՛ . թող անոր
 կամքը կատարի . իմ կամքս ալ ան է,
 բայց իմ սիրտս հազար կտոր կըլլայ:
 Վնա՛ . մտիկ ըրէ՛ . ո՛վ ան . եկո՛ք քեզ
 գրկեմ ու պագնեմ, ու անանկ գնա՛:

Իսահ. Ո՛հ . մայր և բարեկամ՝ արցունք չի վազէ՛
 ձեր աչքնեքէն, թէ որ ես ձեզն՝ հեռու
 ալ երթամ՝ ես միշտ ձեր քովն եմ: Մի՛
 կարծէք բնաւ՝ ես ձեզ չեմ մոռնար՝ զձեզ
 ոչ ձգեմ, ես հիմա իմին՝ հօրըս քով կեր-
 թամ՝ կը դառնամ նորէն: Ան սրտիս մե-
 ջը՝ միշտ կենդանի է՝ ու յիս կը շնչէ, անոր

հաւտացէք՝ անիկայ ինծմալ՝ ձեզի կը
զուսցէ : Խիստ շատ չե՛ք շէր՝ դուք ալ պիտի
գայք՝ ձեզի խօսք կուտամ, ուր որ հիմա-
ձուկ՝ ես պիտի երթամ՝ ու պիտի կենամ :

ՍԱՌԱ , ԳԱՄԱՐ ՈՒ ՀՈՎԻՒՆԵՐ

Գ. 111 . Ս՝ այր իմ , թէ որ իս զաւկի տեղ
կընդունիս , ինծի հասկըցուր , թէ
ինչու համար սիրաբղ գայտափ կը
ցաւի ու կը տանջուի :

Ս. 111-111 . Ա՛յլ որդեակ իմ , ո՛չ ես իմ ցաւս
քեզի կընամ հասկըցընել . ո՛չ ալ
դուն զանիկայ կընաս հասկընալ :
Ա՛յ ցաւը ես այնչափ պիտի չըզ-
գայի , որ քեզի կարենայի բացատ-
րել . ու դուն ալ մայր պիտի ըլլայիր ,
որ կարենայիր աղէկ մը հասկընալ :

Գ. 111 . Բայց այսչափ ցաւիլը՝ անորդեօք ո՞յ
ընդունելի է :

Ս. 111-111 . Հրամէրես , անիկայ գիտէ որ աս
ցաւը՝ իրեն սուրբ կամքին դէմ չի
դներ . ես կողքամ , բայց բոլոր իմ
ողջս ու հեծութիս անոր ընծայ
կընեմ , ես կուլամ , բայց լալու

ատենըս անոր անուհը կօրհնեմ ու
կը բարեբանեմ :

Այն . ես նաև՝ տանջանքներու մէջ՝ քեզ
երկրպագեմ , յաւիտենական՝ ամենաբարի՝
աստուածըդ Որ էն : Ու ինչ որ ինծի՝ դա-
լու ըլլայնէ՝ քու հրամանէն , ամեննալ
ինծի՝ հաճոյ ըլլալով՝ սերս կաւելցընեն :
Թե որ կրնայի՝ քաշել աւելի՝ տանջանք
նեղութիւն , կուզէի քաշել՝ շատ համբե-
րութիւն՝ վասն քո սիրոյն : Վասն զի երբոր՝
ես քեզի կընեմ՝ հնազանդութի , յայնժամ
աւելի՝ կը վաստըկիմ վարձք՝ Է՛ առաքինուի :

ԳԱՄԱՐ ՈՒ ՀՈՎԻՒՆԵՐ

Գամ . ⁴ Կողմեր երթանք միտարեց
. . . բայց դուք ամենքդ ալ կու-
լաք : Ի՞նչէրնէ՛ր մենք ջանալու ենք ,
ան աղվոր հողիներուն ո՛չ միայն բա-
րեգութ մարդասիրութեանը , այլ
նաև առաքինութիւնը հեռուող ըլ-
լանք : Ի՞՞՛ անոնց խոնարհութիւնը ,
որ սերը ու միամիտ հնազանդութիւնը
մեզի օրինակ տրվաւ , ու անոնցմով
մեզի հեռ կըխօսի : Արջանիկ կըլ-

լանք թէ որ անոր խօսքը կարենանք
հասկընալ, ու խեղճ ողորմելի կըլ-
լանք, թէ որ անոր խօսքերը անպը-
տուղ մնան :


Մենք անցաւորքըս՝ ճամբէ ելեր ենք՝ ու
կը մոտորինք, հովերէն ծփեալ՝ ալեքներուն
մէջ՝ միշտ կը պըտըտինք : Ահա ասոնք են՝
մեզի ուղեցոյց՝ աստղ գեղեցիկ, մեր կե-
նացը մէջ՝ պէտք է որ ասոնց՝ մենք միշտ
հետևինք : Թէ որ ունենայ՝ մարդըս այս-
պիսի՝ մեծ օգնութիւն մը, անկարելի է՝ որ
կորսընցընէ՝ նա բնաւ զինքը : Թէ որ ա-
սանկ մեծ՝ լոյս մը ունենայ՝ մարդըս առ-
ջևը, արդեօք կուզէ որ՝ կորսընցընէ իր՝
պայծառ շաւիղը :

Գ Ա Ս Հ Ո Վ Ո Ւ Ա Ց

Ո՞վ հնազանդութի դուստր խո-
նարհութիւ կը ընկեր ամ առաքի-
նութիւ, ո՞վ կրնայ քեզի չափ հա-
ւատացեալ հողին սրբացուցանել :
Մեր կամքը՝ անճանօթ վայրենի
ծառի մը կը նմանի, դուն անոր պա-
կասաւոր ոստերը կը կարես, ու

անոնց տեղը անձային կամաց սուրբ
ընձիւղները կը պատուաստես , որն
զի հին ծառը նորէն ուժ առնու .
անձ անոր սնունդ կուտայ . ու մեր
կամքը կը դառնայ՝ իր կամացը հա-
մեմատ կըլլայ :

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ



ՍԱՌԱ , ԵՏՔԸ ՀՈՎԻԻՆԵՐ

Մ^{***} . Ո՞վ իս պիտի մեղքընայ ու ինձի
պիտի զրուցէ , թէ զաւակս հոն
տեղը ինչ կընէ : Չորս կողմը ծա-
ռաներ հովիւներ խրկեցի , մարդ մը
չի դարձաւ չեկաւ : Ո՞հ կարելի է
թէ ամմէնը իմ վրաս կը գլթան , ու
ինձմէ հեռու կը փախչին : Կարելի է
որ ան զաւակը՝ ինչ վան հիմա աւան-
դերէ իր հօրը ձեռքը իրեն անմեղ
հոգին : Կարելի է որ . . Ո՞վ ան-
իմ , աս ինչ ցաւ է : Մարդ մը չի
կայ որ իս մխիթարէ , աչքէս այն-

չափ արցունք վազէց որ աչքիս լոյ-
 սը պակսեցաւ . ու սիրտը՝ դառ-
 նութեան ծով մը դարձաւ եղաւ :
 Որուն երթամ, ո՞ւր գտնամ անանկ
 առարկայ մը , որ քիչ մը իմ սիրտըս
 բանայ : Ըստաղաւարները՝ ու-
 ըսիս բնակիչներով լեցուն էին .
 հիմա ամմէնուն մէջն ալ առանձ-
 նութի ու սուգ կայ . նաև ճամբա-
 ները՝ երեսէ ձգված են ու կուլան :
 Ոչխարները իրենց հովիւը կը փրն-
 տըռեն . գառնուկները՝ առանց սո-
 վորական օրինաց մոլորեր են , ու
 սա դին ան դին կը պտըտին . հովիւը
 զարնըվեցաւ , հօտն ալ ցրուեցաւ :
 Գոնէ այնչափ մարդիկներէն՝ մէկը
 կարենայի տեսնել . . Ըհա անոնց
 մէկը կուգայ . փնտռեմ հարցընեմ
 . . . Սիրտըս չի դիմանար . . հի-
 վիւններ . . Պիտի դողամ երբոր պա-
 տասխան մը առնեմ . Ո՛հ . ինչու
 համար ասանկ տրտում կը դառնայք :
 Ըբրահամը ո՞ւր է . ինչ տեսաք ,
 կաղաչեմ զրուցեցէք :

Աղէ զտուցեցէք՝ վս զի երբոր՝ դուք լուռ
 կը կենաք , աւելի անգութ՝ ու խիստ անո-

զորմ՝ ինձ դահլիճ կըլլաք : Հիմա խմացայ՝
 մի՛ խօսիք բնաւ՝ բան մը մի՛ զուրցէք, զաւ-
 կիս մեռնիլը՝ ինձ միմացընէք՝ ու ինձի մը-
 սէք : Գիտեմ որ հիմա՝ հոն տեղ կը շնչէ՝
 սիրելի զոհը, կը աւետանեմ ես՝ անոր ցան-
 կալի՝ հաճոյ արիւնը : Որ կարմիր գունով՝
 կը գունաւորէ՝ ան սը սեղանը, կը զգամ ան
 սուրը՝ որ կը թափանցէ՝ հոն անոր սիրտը :

ԳԱՄԱՐ, ՍԱՌԱ ՌԻ ՀՈՎԻԻՆԵՐ

Գ.Մ.Մ. Եւ քու կիկն հրամանդ ուշ կատա-
 րեցի, բայց յանցանքը իմս չէ՛,
 գիտցիր որ . . .

Ս.Մ.Մ.Մ. Գամար. ես ամմէնը գիտեմ. ես՝ ա՛լ
 զաւակ չունիմ. Խառհաղը մեռաւ :

Գ.Մ.Մ. Ի՛նչ կը զրուցես. ես հիմա զանիկայ
 մորենիին տակը տեսայ :

Ս.Մ.Մ.Մ. Ուրեմն անիկայ տակաւին ողջ է,
 չըլլայ որ խաբւիս :

Գ.Մ.Մ. Բիչ ատենէն գունալ զանիկայ
 կը գրկես ու պիտի պագնես :

Ս.Մ.Մ.Մ. Ո՞վ յաւիտենական անձ, անդէօք
 իմ արցունքըս քու կիկն գթութէդ
 արժանի եղաւ. անդէօք քու հրա-
 մանդ փոխվեցաւ. բայց աստուծոյ

Ինչ զո՛հ կարեցին :

Գ՝՝՝ • Եւ կը կարծեմ որ գեռ հիմա զո՛հը
լամբնցած ըլլայ . իմին եկած ատենը
զո՛հ չէին ըրած :

Ս՝՝՝ • Ի՛նանկէ նէ . Ի՛բրահամը այսչափ
ատեն մորենիին տակը ի՛նչ ըրաւ .
Ի՛նչ բանի սպասեց :

Գ՝՝՝ • Եւ ալ աս բանիս վրայ կը զարմա-
նայի . ու բնաւ համարձակութիւն
չունեցայ , որ քովը մօտենամ ու
հարցընեմ : Կարելի է որ անձային
նշանի մը կը սպասէր . վս՛ զի տեսայ
որ մէկէն ՚ի մէկ գէպ ՚ի լեռը գը-
նաց . . .

Ս՝՝՝ • Ի՛ւնձ .

Գ՝՝՝ • Ի՛մմէն բան գեանի վրայ ձգեց . մէկ
ձեռքով՝ սրբանուէր բոցը բռներ
էր , մէկ ալ ձեռքով ալ սուրը բռն-
ներ էր :

Ս՝՝՝ • Իսահակը ի՛նչ կընէր :

Գ՝՝՝ • Իսահակն ալ՝ (ո՛վ խոնարհութեւս)
ան կարած ու ժողված ոստերուն
ծանր բեռը կունակը՝ հոգնելով ու
քրտնելով հօրը ետևէն լեռնէն
վեր կելլէր :

Ս՝՝՝ • Ի՛նչպէս ես այսօր քանի հեղ պիտի
մեռնիմ :

Գ^Գ • Երբոր ես իմ սիրելի տէրքս սնանկ ծառայական ու տաժանելի վիճակի մէջ տեսայնէ, սիրաբար կտոր կտոր եղաւ :

Ես ամեն վայրկեան՝ շատ կը վախնայի՝ ծանր բեռներէն, որ չըլլայ թէ զան՝ իրենց ծանրութիւնը՝ վար ձգեն ճմլէն : Արկարծէի որ՝ նոյն բեռն իմ սրտիս՝ վրայ դրեր են, ու ես ալ սրտովս՝ անոր ծանրութիւնը՝ մէկ տեղ կը քաշեմ : Ան լեռան վրայ՝ տեսնալով անոր՝ բոլոր տանջանքը, այնչափ ցաւեցայ՝ այնչափ քաշեց սիրտս՝ անոր կըսկիծը : Որ ինչվան հիմա՝ դեռ չի կարեցաւ՝ ճակատիս քրտինքը, բնաւ՝ չեմ մոռնար՝ ու միտքէս չելեր՝ ան խեղճ վիճակը :


Ս^Ս • Կողաչեմ՝ քեզի ասանկ խօսքերով իմին խոցերըս մի՛ աւելցընէր :

Գ^Գ • Եւայէ՛, ահա Մ^Մ բրահամը կը դառնայ :

Ս^Ս • Մ^Մ ա՛ղ • ուրեմն զո՛հը լըմընցեր է :

Գ^Գ • Երկբայիւ պէտք չէ՛ • սուրը Մ^Մ բրահամին ձեռքը՝ տակաւին արիւնը վրան՝ կը փայլէ :

Ս^Ս • Ո՛հ երթամ ան ցաւսլի տեսարանը տեսնեմ :



ԱՅՐԱՀԱՄ , ԻՍԱՀԱԿ , ՃԱՌԱՆԵՐ

- Իսահ . Մայր իմ :
- Աբրահ . Կողակից իմ :
- Իսահ . Ո՛ւր կերթաս :
- Աբրահ . Որմէ՞ կը փախչես :
- Սահահ . Իսահակ դու՛ն ես (երանձ է . ի՛նչ է) :
- Իսահ . Հրամայեա ես եմ . մայր իմ : Ահայ որ քեզի խաղաղութի՛ ու հանգըստութիւն տամ . ու դարձայ որ քեզ նորէն գրկեմ :
- Սահահ . Դուն . . . ո՞ղջ ես :
- Իսահ . Այս ողջ եմ . անձ մեզի համար իրեն շնորհացը գանձը բացաւ :
- Սահահ . Որդեակ իմ
- Իսահ . Բայց աւանդ . դուն վար կէյնաս ի՛նչ կըլլաս :
- Սահահ . Ո՛հ . զաւակս . . . ես . . . կը մեռնիմ :
- Աբրահ . Իսահակ . մայրդ վեր վերցուր . ու բռնէ՛ :
- Իսահ . Ո՛հ . երեսը մեռելի գոյն դարձաւ . ու երեսէն պաղ քրտինք կը վաղէ :
- Աբրահ . Չէ՛ չէ՛ որդեակ իմ քեզ մի՛ կորսընցընէր . ու մի՛ շփոթիր : Մէկ մարդ մը մէկէն՛ ի մէկ մեծ ու անսովոր ուրախութե՛ մը հանդիպելու

ըլլայնէ , ասանկ կըլլայ • քիչ մը
հանգստութի գանայ ու սիրտը իջ-
նայնէ , շուտ մը խեղքը գլուխը
կուգայ :

Իսահ • Բայց ինչպէս կրնայ ըլլալ որ , մէկ
մարդ մը այնչափ նեղութիւններու
դիմանայ , ու հիմա ուրախութեան
մը չկարենայ դիմանալ :

Աբր• • Ա՛հ • որդեակ իմ • ցաւը ու նեղու-
թիւնը մեզի ծանօթ ու սովորական
բան մը նէ եղեր • բայց ուրախու-
թիւնը ու զուարճութիւնը միշտ օտար
ու անցաւոր բան մընէ :

Մարդըս երբոր՝ կը ծնանի՝ աշխարհք
կուգայ , տանջանքներու՝ ծովու մը մէջ՝ նա
կը մտնայ : Օրօրոցէն՝ միշտ սորվելու՝ նա
կըսկըսի , համբերելը՝ ամմէն վշտոց՝ մարմ-
նոյ սրտի : Բարի բանը՝ մարդուս համար՝
միշտ ցանցաւ է , ու խնտումը՝ սակաւ-
գիւտ՝ կարճատե է : Անոր համար՝ դիմա-
նալ նա՝ բնաւ չիյտէ , մէկ չափազանց՝ ցըն-
ծութեան մը՝ երբ սլատահէ :

Գա՛մ • Լ՛հա Սառան աչվոնները բացաւ ,
ու սկսաւ նորէն շունչ առնել :

Ս••••• • Լ՛բրահամ • Իսահակ • դուք հո՛ն
էք , անդէօք իրաւ է :

Իսաի . Հրամէրէս մայր իմ . ահա դուն
 իմ գիրկս էս :

Սաուա . Ա՛յլ ամենողորմ ի՞նչ . քու անունդ
 միշտ օրհնեալ ըլլայ : Բայց Բ՛լբ-
 րահամ սա բանը ի՞նչպէս եղաւ :

Աբրա . Ստիկ ըրէ . ու ի՞նչպիսի անհուն
 բարութիւն երկրպագութիւն ըրէ՛ :
 Ի՞նչ ինծի զօհին տեղը ցըցուցածին
 պէս , շուտ մը ոտք ելայ . ու սկսայ
 դէպի ան բլուրը երթալ . աղաս
 միայն մէկ տեղ առի . որ ետեւս
 կուգար . բայց դուն մամաա , թէ
 ան միջոցին մէջը սիրտըս ի՞նչ վե-
 ճակի մէջ էր : Ճամբան Իսահակը
 ինծի կը հարցընէր , թէ զօհը ո՞ւր է :
 Ես ալ առանց անոր երեսը նայե-
 լու՝ արմատութե՛ն անոր պատասխան
 կուտայի , թէ զօհը ի՞նչ կը հոգայ
 ու կը պատրաստէ , ու լեւնէն վեր
 կելլայի : Հոն տեղը հասածիս պէս ,
 խորանը շինեցի , չոր ոստերը վրան
 շարեցի , աղան ալ կապեցի . . .

Սաուա . Ա՛հ . ան տաէնը անիկայ ամէն բանը
 իմացաւ : Աւ ի՞նչպէս իրեն կեանքը
 աստուծոյ ընծոյ ըրաւ :

Աբրա . Հեղ , համը ու անմեղ գառնուկի
 մը պէս :

Սահման. Մ'բրահամ . ես քու կինն ան ատեն-
վան վիճակդ միայն միտքս բերելով ,
կը դողամ ու կը սառիմ :

Աբրահամ . Չէ՛ Սառան , չէ՛ . ան ատենը մէկ
անձապարզեւ գաղտնի զօրութի մը
սկսաւ իս կառավարել : Մն ատենը
հայր ու մարդ ըլլալըս մոռցայ .
շնորհքը՝ բնութեանը յաղթեց :
Մարդուս խելքէն դուրս մէկ լոյս
մը՝ իմ մտքիս մէջը՝ այ խոսամունք-
ները ու աղային մեռնիլը՝ մէկ տեղ
կը բերեր , բոլոր սիրտս՝ սիրով ,
հաւատով ու յուսով կը վառվէր ,
ու կը կարծէի որ այ հետ կը խօ-
սիմ . Իսահակը ծուռնկի վրայ եկեր
էր , ու ես ձախ ձեռքովըս զանի
բռնէր էի . ու աչքովս վեր երկինքը
կը նայէի . ու երբոր աջ ձեռքս
վեր վերցուցի , որ զանի սրով զար-
նեմ , ձեռքս ինջեցրնելու ատենը . . .

Սահման . Սիրտըս կը դողայ :

Աբրահամ . Մէկէն 'ի մէկ պայծառ լոյս մը
օդին մէջը երևցաւ . ու երկնքէն
ձայն մը լսեցի , որ բարձրաձայն ինձի
կը զօրուցէր : ,, Մ'բրահամ կայնէ՛ .
աղադ մի՛ զարներ մի՛ մեռցրներ , ան-
քու կինն որչափ երկիւղած ըլլալդ

հասկըցաւ . ու տեսաւ որ դուն
պատրաստ ես անոր զոհելու մէկ
հատիկ զուտակդ . քեզմէ հիմա ալ
բան մը չուզեր : Կ

Ս Կ Կ . Հիմա հանգչեցայ :

Ա Բ Կ . Մ խօսքերուն ձայնը Ո՞վ
կողակից իմ . ան ինչ աղվոր վայր-
կեան էր . Մ բրահամ անատենը
նորէն մարդ ու հայր եղաւ . սա
խօսքերուս ձայնը իմ սիրտըս հանգ-
չեցուց . չորս կողմը եղած թումբե-
րը պատուտեց կոտրեց . ու արգե-
լած ու բռնըված կիւրքերուն սաս-
տիկ գետը իս կոխեց : Օ արմանքը ,
ուրախութիւն , երախտագիտութիւն ,
սէրը , երկիւղը , ցանկութիւն , գորո-
վը , գթութիւն ան միջոցին մէջը մէ-
կէն ՚ի մէկ սիրտըս ճմլեցին : Աու-
զէի այ շնորհակալութիւնքնէլ ինձի
ըրած շնորհքին համար , բայց լե-
զուս չէր կրնար բան մը զրուցել :
Աուզէի որ տղուն կապերը քակեմ ,
բայց ձեռքըս կը դողար , ու չէր
կրնար շուտ մը քակել . չափազանց
ուրախութեամբ , ամբողջ խօսք մը չէի
կրնար զրուցել . սիրով կը գրկէի .
ու լալով կը պագնէի . Ո՞հ , ասոնք

պատմելու տաէնըս նորէն սիրտըս
 ոտք կելլայ ու տակնու վրայ կըլլամ:
 Արդեակ իմ՝ մնացածը դուն պատ-
 մէ՛ իմին տեղըս, վն զի էս չեմ կրնար:
 Իսահ . Բայց ինչպէս անտաէնը տակաւին
 կենդանի մը չեկար որ զո՛հ ընենք:
 ՄԺ զանի հոգաց ու պատրաստեց .
 ինչպէս որ Մ.բրահամ առաջուց
 գուշակեց: Սառերուն մէջէն ձայն
 մը լսեցինք . տեսանք որ ճերմակ ոչ-
 խար մը եկեր է, եղջիւրներէն ծա-
 ուերուն մէջ բռնըվեր է, ու չեկրո-
 նար զինքը ազատել: Մնիկայ իմ
 տեղըս անցաւ . զանիկայ զարկինք
 ու սեղանին վրայ զո՛հ ըրինք . երբոր
 անիկայ իմ տեղըս անցաւնէ, էս
 նախանձեցայ:

Մնոր տանջանքը՝	անձս պիտի քաշեր,
ան սուրը իմին՝	սիրտս պիտի մոնէր,
անոր մահուանը՝	պատիւը փառքը,
ի սկզբանէ՝	ինձ խոստացված էր:
Բայց դուն ս'վար իմ՝	թէ որ չես ուզեր,
որ քեզի ըլլամ՝	էս զո՛հ ու հուէր,
գոնէ թողտուր քեզ՝	միայն ծառայեմ,
քանի որ էս ողջ՝	ու կենդանի եմ:

Գտմ . Երջանիկ էս Մ.բրահամ, որ քու-

կին հաւատարմութեդ ու հաւատ-
քիդ մեծ օրինակը ու նշանը նոյ
ցըցուցիր :

Սահման. Չէ անոր երջանկուիրը ասիկայ չէ :
Մբրահամ նոյ ծանօթ էր , բայց
գեռ փորձըված չէր : Մբրահամ
զինքն ալ աղէկ չէր ճանչնար : Մնի-
կայ չէր գիտեր թէ որչափ առա-
քինութի ու զօրութի ունի . նա
ուզէց՝ որ անիկայ իրեն զօրութիւր
հասկընայ : Աւզէց որ բոլոր աշ-
խարհքիս՝ անիկայ հաւատոյ ու արի-
ութե օրինակ ըլլայ : Արանի թէ
անոր օրինակները շատ պտուղներ
տային . ու մենք ալ միշտ մեզ նոյ
զոհ ընեինք :

Մեր կուրծքը ըլլայ՝ մաքուր սբ սեզան ,
մեր սերը ըլլայ՝ բոյ պրոշական :
Իզճք սրտից ծնունդք՝ թող միշտ զոհ ըլլան ,
աստուծոյ հաճոյ՝ ընծայից նման :
Չաւակ զոհելը՝ այնչափ մեծ վարճք չէ ,
կերք մը սանձելը՝ շատ մեծ արդիւնք է :

Աբր. I ուս կեցէք , երկինքը կը բացվի :
Հրէշ. Մբրահամ . ահա ես նոյ կողմանէ
քեզի կը գտունամ կուգամ . ու ա-
ւետիս կը բերեմ : Մուկին հաւա-

տարմուկթեանդ երևելի փորձը՝ այս
այնչափ ընդունելի եղաւ որ, ան-
նորէն իր խոստմունքները կը հաս-
տատէ: Վեզ կօրհնէ, ու օր մը
բոլոր ազգերը քու զաւակովդ պի-
տի օրհնէ. ու երկինքը՝ որչափ
աստղ, ու ծովը՝ որչափ աւազ կայ-
նէ, քու զաւակիդ ալ այնչափ զա-
ւակ պիտի տայ:

Ան վսեմ բոյրը՝ երջանիկ օրեր՝ պիտի ան-
ցընէ, և՛ ամենաւն առջին՝ իր թշնամեացը՝
յազթեւով իշխէ: Ա՛ճ՝ խոստացաւ՝ ան-
հաստատէ՝ ու երգում կընէ, վասն զի աշ-
խարհս՝ ինչվան ետքը միշտ՝ իր ձեռքին
մէջն է:

Սառսա. Մ'բրահամ. լեցիր. . .

Իսահ. Հայր. . . անիկայ չի լեր:

Սառսա. Ո՛հ. ինչպէս երեսէն կրակ կելլայ:

Աբր. Ո՛վ ամենակարօղ ան- սոյսօր ինչ
ձեւերով կը խօսիս: Այն իսկ հայրը՝
իր զաւակը զո՛հ կը մատուցանէ. զա-
ւակը՝ կամօք յանձը կառնու անանկ
մէկ տանջանք մը, որուն բնաւ ար-
ժանի չէ: Ինչո՞ւ համար իրեն մահ-
ուանը մահառիթ գործ իքները կը ո-
նակին վրայ կը վերցընէ կը տանի:

Ինչո՞ւ համար այնչափ լեռներուն
 մէջը՝ Խճ ան լեռը կընարէ ու կո-
 րոշէ : Ինչո՞ւ համար զո՛հին գլուխը
 փուշերով պատած է : Ա՛հ . ապա-
 գայ ժամանակը իմ մտքիս առջևը
 կուգայ : Կը տեսնամ որ ան լեռանը
 վրայ ուրիշ արիւն մը կը թափի . կը
 տեսնամ որ մէկ ուրիշ որդի մը՝ իր
 գլուխը ծռելով՝ իր հօրը ձեռքը
 իր մեծ հոգին կաւանդէ : Բլուր-
 ները կը դողան , գերեզմանները կը
 բացվին , ու բոլոր երկինքը՝ գիշեր-
 վան պէս կը մ'թնայ : Ա՛յլ Խճ իմ
 հասկըցայ հասկըցայ . շնորհակալ
 եմ : Բսիկայ ան օրն է , որ ես ուզե-
 ցի տեսնալ : Բս ան պատուական ու
 անգին արիւնն է , որ անհամար յան-
 ցանքները ու մեղքերը պիտի քաւէ :
 Բս ան զո՛հը ու պատարագն է , որ
 յաւիտենական արդարութիւնը ու
 յաւիտենական գթութիւնը մէկ տեղ
 պիտի հաշտեցնէ : Բս ան մահն է ,
 որ մարդուն՝ կենաց դուռը պիտի
 բանայ : Ա՛յլ մեծ օր , ո՛վ անգին
 արիւն , ո՛վ փրկաւէա պատարագ ,
 ո՛վ անմահացուցիչ մահ :

Որովհետև ամենաստեղծն աստ-
 ուած այնչափ դարերէն առաջ մե-
 աշատութիւնը երկինքը կը պատ-
 րաստէ , ու մարդուս անմահ հոգ-
 ւոյն փրկուածեանը համար , այնչափ
 խնամք ու հոգ կը տանի . մէնք ալ
 ջանանք որ անոր ասանկ մեծ խը-
 նամոցը պտուղը չի կորսընցընէնք :



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Յ Ո Վ Ս Լ Փ Գ Ե Դ Ե Յ Ի Կ

ԿԱՄ

**Յ Ո Վ Ս Ե Փ Ա Յ Ն Ո Ր Ի Ն Գ Տ Ն Ը Վ Ի Լ Ը
Ո Ի Ճ Ա Ն 2 Յ Ը Վ Ի Լ Ը**


Դ Ե Ր Ա Ս Ա Ն Ք

ՅՈՎՍԻՓ } որդե՛ք Յանձեքայ և Հը-
 ԲԵՆԻԱՄԻՆ } ասէլէ .
 ՅՈՒԴԱ } Էղբար՛ք Յանձեքայ և Բենիամի-
 ՇՄԱԻՈՆ } նի . որդե՛ք Յանձեքայ և Լևիայ :
 ԱՍԱՆԷԹ . Յանձեքայ նիկը :
 ՏԱՆԵՏԵՍ . Հասարի՛ ճասայ Յանձեքայ :
 ԴԱՍ ՈՐԴԻՈՅ ՅԱԿՈՎԲԱՅ

Ը թատրոնական խաղարկութիւնը կը
 լայ Սեմիկա քաղաքին մէջ :



Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն



ՅՈՎՍԷՓ ՈՒ ՏԱՆԵՏԵՍ

- Յ⁴ • Մեր ազգակից Երբայեցիներէն
տակաւին մարդ մը չի դարձաւ չե-
կա՛ւ Սեմիիս քաղաքը :
- Տ^{ան} • Սարդ չեկաւ :
- Յ⁴ • Գու՛ն մարդ խրկեցի՛ր , որ երթայ
ճամբաները նայի :
- Տ^{ան} • Շատ մարդ խրկեցի , բայց պա-
րապ տեղը աչխատեցան :
- Յ⁴ • Ըս թագաւորանիստ մայրաքաղաքը
Սամբրէի ձորէն խիստ շատ հե-
ռու չէ՛ : Ընոնք շատոնց է որ գա-
ցին , ինչպիսն հիմա անոնք քանի մը
հեղ կրնային երթալ գալ :
- Տ^{ան} • Տէր թողու՛թի՛ ըրէ՛ , ես քու կին
միտքը բնաւ չեմ հասկընար , ու
կարծեմ թէ արժանի բան մը չէ
որ հրամանքը ասանկ քանի մը հո-
վելը քեզի այսչափ հոգ ընես :
- Յ⁴ • (Տանետես չի գիտեր որ ես անոնց
եղբայրն եմ) բա՛րեկամ , ես չեմ

ուղեր որ անոնք իմ վրաս խնդան :
 Եւ անոնց ապապրեցի որ գալու
 առեննին պղտիկ Քենիամինը՝ Յա-
 կոբայ ետքի զաւակը հետերնին
 առնեն բերեն . չի տեսար որ անոնք
 սա հրամանս կատարելու համար
 ինչվան որ ինծի խօսք տրվին նէ ,
 որչափ դժուարութի ու նեղութի
 քաշեցին :

Տան . Բայց հրամանքիդ բանը աւելի ա-
 պահով ու անտարակոյս է . վասն զի
 անոնց մէկը պատանդ առիր , ու թէ
 որ անիկայ հերէք չէ , սաստիկ սովը՝
 ՚ի հարկէ զանոնք նորէն քու ոտ-
 քըդ կը բերէ : Մնոնց չորս կողմը
 եղած անբեր ու անպտուղ գա-
 լառներուն մէջը բան մը չի կայ ,
 որով մուրացկան բնակիչները կա-
 րենան ապրիլ : Յորենները կամ չեն
 բուսնիր , կամ չի մեծցած կը չոր-
 նան . օր է օր ոչխարները կը պակսին
 ու հովիւները կը տկարանան : Մնօ-
 թի կենդանիները չորութե պատ-
 ճառաւ բան մը չեն գտնար որ ու-
 տեն , ու անօթի երկրագործին ոտ-
 քը չի բռնէր ու իրեն պատշաճ կե-
 րակուր կը փնտռէ , ու չի գտնար :

- Բայց հրամանքդ քուկին իմաստու-
թիւդ ու խնամքովդ առաջուց ցո-
րենը ժողվեցիր ու պահեցիր • ու
անոր համար հիմա միայն Մեմիխա
քաղքին մէջը ցորենը առատ կը
գանձվի , ու բոլոր աշխարհք նե-
ղութի կը քաշէ • ու չի մեռնելու
համար , կը վազէ Նգիպտոս կուգայ :
- Յ՞՛՛՛՛ • Թիւ որ նախանձոտ եղբայրները
Բենիամինը նախանձելով , անոր
բանմը ըրին նէ , ի՞նչպէս կրնայ ըլ-
լալ որ Բենիամինը հոս տեղը գայ :
- Տան • Ի՞նչու համար ասանկ հեռու կաս-
կածներ քու սրտիդ մէջը կը ծը-
նանի :
- Յ՞՛՛՛՛ • Ս ասն զի Յակոբ աս զուակը շատ
կը սիրէր :
- Տան • Սիրելով ի՞նչ կրնայ ըլլալ :
- Յ՞՛՛՛՛ • Իմ հայրս ալ երբեմն իս շատ կը սի-
րէր • իմ եղբայրներս ալ իս նախան-
ձելով , ինձի նենգութի ու զրպար-
տութի ըրին • ու աղէկ գիտեմ որ
• • • Ա՞՛՛՛ զու թագաւոր երկնից ,
դուն զանիկայ պահէ պահպանէ :
- Տան • Բայց հրամանքդ ինչո՞ւ ասանկ
անձանօթ տղայի մը համար այսչափ
հոգ կընես , ու անոր վիճակը այս-

չափ կը մտմտաս :

Յ¹ Լ • Բէնիամինը ու էս իրարու շատ կը նմանինք , երբոր անոր վիճակը կը մտմտամ նէ , իմինըս միտքըս կուգայ :

Ասի բնութեան՝ անխախտ օրէնք է՝ ցաւիւ ուրիշը , երբ կը տեսնենք որ՝ ան ալ կը քաշէ՝ մեր քաշած վիշոր : Նմանութիւնը՝ մեր սրտին մէջը՝ կը լաուէ սէր մը , ու մերին նովը՝ լաւ կը հասկընանք՝ ուրիշին ցաւը :

Տ¹ ան • Բ¹ րանկ մէկ ոչինչ բանի մը համար ինչո՞ւ քեզ կը տանջէս : Իրաւ որ՝ աս աշխարհքիս մէջը կատարեալ երջանկութի՛ չի կայ : Թէ որ յետին թշուառութի՛ ու ճախորդութենէ՛՝ մեծ հարստութի՛ր ու յաջողութի՛ր անցնիլը՝ շատ անուշ ու զուարճալի բան է նէ , մարդ մը քեզմէ աւելի՛ ուրախ ու զուարթ պիտի չըլլայ : Գու՛ն օտարական ծառայի մը պէս հոս տեղը եկար : Ագիտացի անպարկէշտ կնկան զօրարտուէր հանդիպելով , անանկ մէկ որոգայթի մը մէջ ինկար , որ քիչ մնաց պիտի կորսովէիր : Բ¹ քեզն գթալով՝ մէկէն՝ իմէկ քեզն յայտնութի՛ շնորհքը արվաւ . բո-

րը ըլլալու բաները քուկին մըա-
 քիդ երեցաւ . որուն վախճանը ու
 որուն հարստութիւնը ու փառքը ըս-
 կըսար դուշակելու . քուկին գու-
 շակութիւնները Մեմփիս քաղաքին
 մէջ զուրցըվեցան . թագաւորը
 իրեն տարակոյսները քեզի հարցուց .
 դուն ան տարակոյսները մեկնեցիր .
 ճախորդութիւնները ու անոնց գեղը
 անոր սորվեցուցիր . դիպվածքը ա-
 նանկ ըրաւ որ քուկին տըված խը-
 րատները ու խորհուրդները ա-
 նիկայ հաւնեցաւ . դուն մէկէն ՚ի
 մէկ բանաէն ելար . թագաւորական
 պալատը գացիր նստար . քուկին
 ծառայական հագուստդ՝ փառա-
 ւոր իշխանական ոսկեհուռ ու ա-
 կանազարդ զգեստներու փոխվե-
 ցաւ : Թագաւորական կառքին մէ-
 ջը նստար ու փառաւորապէս կը
 պարտիս ան երկիրներուն վրայ . ուր
 որ երբեմն գերիի պէս կը պըրաւե-
 իր . ամէնը չորս կողմէն քեզի Փըբ-
 իէշ աշխարհէ կը զըուցեն . թագաւո-
 րին ու բոլոր թագաւորութե գուն
 դատաւոր եղար : Աւորովհետեւ հա-
 րըստութիւն ու փառք ունիս . կըա-

ըրձութի ու աղվոր զաւակ ունիս ,
բոլոր աշխարհքէս օրհնութի կառ-
նես . ու նոյալ սիրելի ես . անոր
համար ես անանկ կը կարծեմ , որ
աշխարհքիս մէջը ալ բան մը չէ՛
մնացեր որուն դուն փափաք ու
կարօտութի ունենաս . ՚ի վերայ այսր
նամի , այսչափ երջանկութեց ու յա-
ջողութեց բարձր վիճակին մէջը ,
դուն քեզ տանջելու ճամբայ մը
գտեր ես :

Թէ որ ամենուն՝ սրտին տանջանքը՝ գըր-
վեր ճակատը , ու զանի կարգաւ՝ դեւրաւ
կարենար՝ ամենուն աչքը : Որչափ մար-
դիկներ՝ որ հիմա մեզի՝ շատ կը նախան-
ձին , ան ատեն մեզի՝ մեղքընալով մը՝ պիտի
գթային : Պիտի տեսնուի՝ որ մեր Թշնա-
մին՝ մեր սրտին մջն է , ու բոլորովին՝ եր-
ջանկութիւննիս՝ սուտ երևոյթ է :

Յ՝Ղ . Պննա . Բասնէթը կուգայ . իմին
հրամանս մի մոռնար . Թէ որ Յա-
կոբայ զաւակները գալու ըլլան նէ ,
ու Բենիամիներ տեսնալու ըլլաս նէ ,
չուտ մը եկն ինձի խնոցուր :

Տան . Պլխուս վրայ . բայց դուն ինչպէս
որ ուրիշին քեզ հանդարտ կերև-

ցընեսոնէ , նայէ որ դուն քեզի ալ
 հանդարտ ըլլաս . ամէնը կը մխի-
 թարես . միայն դուն քեզ կը տան-
 ջես . ուրիշներուն տարակոյսները
 կը լուծես , քու կին տարակոյսե-
 րը կը շատցընես :

ԱՍԱՆԷԹ ՈՒ ՅՈՎՍԷՓ

- Աստ . Սի տէր իմ , անդէօք կընամ քեզ
 մէ շնորհք մը յուսալ :
- Յով . Սիրելի կողակից իմ , աս տարակոյսը
 իս կը նախատէ ու ինծի կը դպչի :
- Աստ . Ին եբրայեցի գերիին ազատութի
 տուր . բանտէն հանի :
- Յով . Եմաւոնը :
- Աստ . Հրամէրես :
- Յով . Բայց դուն չի ճանչցած մարդը
 ինչո՞ւ համար այսչափ կը մեղքընաս :
- Աստ . Դուն ինչու համար այնչափ խըս-
 տութիւն կը պատժես ան մարդը , որ
 քեզի մնաս մը չի՞ ըրեր , ու յան-
 ցանք մը չունի :
- Յով . Դուն ուսկից իմացար անոր անմեղ
 ըլլալը :

- Աստ . Մինոր յանցանքը չեմ տեսներ . միայն պատիժը կը տեսնեմ :
- Յ՞՛՛՛՛՛ . Ուրեմն չի տեսնուլած յանցանքը , յանցանք չէ՛ :
- Աստ . Քայց դատաւորը քիչ մը գթած ըլլալու է :
- Յ՞՛՛՛՛՛ . Քայց անիրաւ ըլլալու չէ՛ :
- Աստ . Ո՞վ տէր իմ . արդարու թեան մէջը գթութի՛ չըլլայ նէ , ան արդարութիւնը՝ անգթութիւն կը սեպուի :
- Յ՞՛՛՛՛՛ . Քայց գթութեան հեան ալ արդարութի՛ չի գտնուի նէ , ան գթութիւնը՝ տկարութիւն կը սեպուի :
- Աստ . Դուն բոլոր աշխարհքիս տիրոջը նմանօղեղի՛ր , անիկայ արդարոց ու մեղաւորաց վրայ հաւասարապէս կանձրեւէ . ու կուզէ որ արեւը՝ բարի ու չար մարդիկներուն վրայ հաւասարապէս ծագէ :
- Յ՞՛՛՛՛՛ . Ո՞վ որ անոր նման ըլլալ կուզէ նէ , պէտք է որ երբեմն ուղղելու համար ասնջէ՛ ու սիրէ :
- Աստ . Քայց թողութիւն ըրէ , արտաքին նշաններէն անանկ կերեւայ որ քուկին ըրած ըդ աւելի ասեւլութի՛ է քան թէ սիրով :
- Յ՞՛՛՛՛՛ . Ո՞՛՛՛՛՛ սյսպէս շուտ մը իս մի՛ դատա-

պարտեր • ինչպէ՞ս շուտ մը ուրիշե
 վրայ ծուռ դատում կընենք • ասի-
 կայ մեր անձնասիրութիւնը ողորմելի
 պատուին է • կը կարծենք որ ուրիշը
 կանարգենք նէ , մեզ կը փառաւո-
 րենք • ու ուրիշին պատիւը կը պակ-
 սինէ , մերինը կաւելնայ : Վճմէն
 մարդ կը ջանայ որ իրեն ունեցած
 պակասութիւնը ուրիշին վրայ ալ գրա-
 նայ • կամ անանկ պակասութիւնը որ
 անիկայ չունի : Վս պատճառաւ շատ
 հեղ բաներուն անունը կը փոխենք :
 Մենք վախկոտ ըլլանք նէ , ան վա-
 խը՝ խոհեմութի է կըսենք • ու ա-
 նարգութի՝ համեստութի կամ չա-
 փաւորութի կըսենք • ուրիշին վրայ
 համեստութի ու չափաւորութիւն
 տեսնենք նէ՝ անարգութիւն է կը-
 սենք , ու խոհեմութի ալ՝ վախկո-
 տութի կըսենք : Մենք մեզ շատ
 հաւնելնուս , ու մեզմէ շատ գոհ
 ըլլալնուս համար է որ աղէկ բանը
 շատ ուշ կը հաւտանք , ու գէշ
 բանը խիստ շուտ :

Շատ կը փափաքիմ՝ որ դուն մէկ բանը՝
 շուտով չի գտանս , ինչվան որ լաւ մը՝ քանի

մը ատեն՝ փորձով չի քննես : Ան բանին
որ դուն՝ վաղվաղիտուք՝ խստութի կըսես ,
կարելի է որ՝ անիկայ ըլլայ՝ գթութի խիստ
մեծ : Աստուծոյ քեզի՝ դատելու ատեն՝
չատ զգոյշ եղիւր , ու աս խօսքըսալ՝ քու
ականջոյդ դիւր՝ ու աղէկ գիտցիւր : Որ խըս-
տութիւնը՝ երբեմն մարդկանց՝ մեղքը կը
հերէ , ու գթութիւնն ալ՝ շատ անգամ
մարդոց՝ մեղքը կը սրտաժէ :

Աստ . Թէ որ զանի ազատել չես ուղէր ,
գոնէ դիմացդ բերել տո՛ւր ու թող
տուր որ խօսք մը զըուցէ , աս խօս-
քիս ալ անդեօք չի՛ կըսես :

Յ՛՛՛՛ . Խիստ աղէկ . աղա՛ք գացէ՛ք Շ մա-
ւոնը ինծի բերէ՛ք . (Մասնէթը ա-
նոր ըրած հին մեղքը ու մատնուիլը
չի գիտէր . ու նաև չի գիտէր որ իմ
եղբայրս է ու իմ թշնամիս է :

Աստ . Մնոր խօսքերէն , շարժմունքներէն ,
կերպարանքէն յանցաւոր ըլլալը
չըլլալը աղէկ կրնաս հասկընալ :

Յ՛՛՛՛ . Մասնէթ . ան նշանները մարդս կը
խաբեն : Սէնք չենք կրնար մար-
դուս սրտին մէջը եղած ծածուկ
խորհուրդները իմանալ . մեր աչքը՝
երեսէն ան դին բան մը չի կրնար
տեսնալ . սրտին մէջը եղածը՝ նոյն

աչքը միայն կրնայ տեսնալ :
 Աստուծոյ հոգին երբեմն իրեն շարժ-
 մունքը մարմնոյն մէջ անանկ աղէկ
 կը տպաւորէ որ, հոգւոյն կիւրքերը
 ու բաղձանքները՝ մարմինէն կը
 հասկըցվի :

Ամէն ծառերուն՝ արտաքին դէմքը՝ լաւ
 մը կը յայտնեն, իրենց տերեւէն՝ ու պտուղ-
 ներէն՝ կամ ծաղիկներէն, ան պակասութիւնը՝
 որ ծառոց բունքը՝ ներսը կը պահեն :
 Անանկ ալ մարդուն՝ սրտին տանջանքը՝ որ
 պահվում է, երեսին դոյնը՝ սուտ ծիծա-
 ղով մը՝ շուտ դուրս կը հանէ : Ո՛վ որ սր-
 տին մէջ՝ կըզգայ պատերազմ՝ ու խռովու-
 թիւն, չի կրնար կեղծել իր դէմքին վայ
 խաղաղ հաշտութիւն :

ՅՈՎՍԷՓ, ԱՍԱՆԻԹ ՈՒ ՇՄԱՒՈՆ

ՅՊԷ . ((մաւոնը կուգայ . ո՛հ . թէ որ
 անիկայ կարենայ միտքէն անցընե-
 լու որ ես) Յովսէփն եմ : Ո՛վ յա-
 ւիտենական արդարութիւն, ահա
 անիկայ իմ ձեռքիս մէջն է . ու ան-
 նիկայ որ կուզէր իր եղբայրը մեռ-

ցընել, իրեն եղբօրը գերի եղաւ :)
 Հովիւ ինձի մօտ եկո՛ւ :

Շմ • Խոնարհուածք ու հպատակուածք ,
 ո՞վ աէր իմ , քու ոտքըդ էյնալով . . .

Յով • Ոտք ելի՛ր :

Շմ • (Ըս ի՛նչ ձայն է , սա ի՛նչ դէմք է •
 Էս ինչո՞ւ համար կը դողամ , ու ինչ-
 չո՞ւ համար համարձակուածիւնս կը
 կորսընցընեմ :)

Ասս • Օրուցէ՛ .

Շմ • Համարձակուածի ջուհիմ , քու եր-
 կանդ առջևը ելայնէ , մէկ անձա-
 նօթ վրդովմուկքմը սրտիս մէջը
 թափանցեց :

Յով • (Խղձմտանքը զնեքը կը դրդէ • ու
 ինքը չիմանար :) Հովիւ քու անու-
 նըդ ի՛նչ է :

Շմ • Շմաւոն է • հրամանքըդ գիտես :

Յով • Հայրենիքդ ո՞րն է :

Շմ • Խառան է :

Յով • Հայրդ ո՞վ է :

Շմ • Յակօբ •

Յով • Մայրդդ :

Շմ • Լիա :

Յով • Հոս եկած ստեղծք քեզն հեա է-
 զողները ո՞վ էին :

Շմ • Եղբայրներըս էին :

- Յ՝Վ . Մէկալ էղբայրներուդ ալ հայրը
 Յակոբը չէ՞ :
- Շհս . (Ո՛հ) Հրամէրես . բայց անոնք գե-
 ղեցիկ հաագէլէն ծներ են :
- Յ՝Վ . Ընոնց անուներ ի՛նչ է :
- Շհս . Յովսէփ ու Բենիամին :
- Յ՝Վ . Ընոնք ինչո՞ւ համար քեզի հետ
 չէկան :
- Շհս . Պզտիկը հօրըս քովը մնաց :
- Յ՝Վ . Մէկալը ո՞ւր է :
- Շհս . (Ո՞վ սատուած) մէկալը . . .
- Յ՝Վ . Չի զրուցէ՞ս :
- Շհս . Ընիկաց չեմ գիտեր :
- Յ՝Վ . (Ես աղէկը գիտեմ) :
- Ասս . (Երեսին գոյնը նետեց) :
- Յ՝Վ . Վոնէ զրուցէ , Յովսէփը արդէ՞օք
 ողջ է :
- Շհս . Հայրըս զանի մեռածի տեղ դնե-
 րով , լացաւ :
- Յ՝Վ . Ուրեմն անիկաց մեռաւ :
- Շհս . Ընոր վեճակը մեզի անծանօթ է .
 ու ի՛նչ ըլլալը չենք գիտեր :
- Յ՝Վ . Վու խօսքերըդ բնաւ իրարու չեն
 յարմարիր :
- Շհս . Բայց շիտակ են :
- Յ՝Վ . Մնաց որ՝ Յովսէփին ի՛նչ եղաւ :
- Շհս . Ո՞վ տէր իմ կաղաչեմ քեզի Յով-

սէփինն խօսքը ալ ինծի մընէր, ասա ա-
նուներ ինծի մէկ մեծ տանջանք մընէ :

Յ՝Վ . Յանցանք մը ըրա՞ն . ի՞նչ ըրաւ :

Շ՝Ս . Չէ :

Յ՝Վ . Գուցէ՞ իր հօրը ապերախտութիւն
ընէլով, ու քեզի ալ թշնամի ըլլա-
լով քեզի նենգութիւնը վնաս մը տը-
վաւ . ու անոր համար ալ քու ասե-
լու թեանըդ արժանի եղաւ :

Շ՝Ս . Մանաւանդ՝ անմեղ ու արդար . .
Ա՛հ . տէր իմ, ինչէ՞ր ինծմէ կը փըն-
տուես . ի՞նչ բաներ ինծի կը յի-
շես . ու միտքըս կը ձգես . թող տուր
որ դառնամ բանտեր թամ : Ա՛նց
գիտնալու սիրտըս կը խոցես . քու
դէմքդ իմին համար ձախութիւնս
ինծմէ կը վերցընէ . ու ամմէն մէկ
հարցմունքըդ՝ դառն յիշատակով
մը հոգիս կը կսկծցնէ : Ա՛ն՛ղ

Ասրճեմ թէ աչքիս՝ առջև կեցեր է,
խեղճը անմեղը՝ կողբայ կը հեծէ .
վասն զի իրեն՝ հօրմէն զատկեցաւ,
ու իր ծնօղքին՝ գրկէն խլկեցաւ :
Արտեսնեմ լալը՝ կը լսեմ ձայնը,
կը յիշեմ դէմքը՝ դառն յիշատակը .
կաղաչեմ հիմա՝ ձեր հրամանոցը,
որ թող տաք երթամ՝ ու նստիմ բանտը :

ՅՊԷ • (Օ՞ւնիկայ միսիթարելու համար ,
 կուզէի զիս անոր յայտնել . բայց
 դեռ ժամանակը չէ՛ :) Քուկին
 խառնափնդոր ու շփոթ խօսքերէդ
 իմ կասկածներըս կաւելնան . ու
 քուկին եղբայրներուդ ուշա-
 նալը

ՏԱՆԵՏԵՍ , ՈՒ ՎԵՐԻՆՆԵՐԸ

Տան • Ըզգակիցներըդ եկան հասան :

ՅՊԷ • Իենիամինը :

Տան • Ըն ալ եկաւ . ահա հոս է . բայց
 անիկայ ամէնէն կամօց կը քալէ ,
 ու ետ մնացեր է :

ՅՊԷ • (Ո՞վ մայր իմ կարծեմ թէ քեզ
 նորէն տեսայ . ասոր երեսը տեսած
 ատենըս :) Տանէտես . դնա՛ շուտ
 մը սեղանը պատրաստէ : (մաւոնը
 բանտէն ելլայ , ու դուք հովիւներ
 ինծի աւելի մօտ եկէ՛ք . (բայց դուն
 սէր սրտիս՝ չըլլայ թէ իս մտանես
 ու իս յայտնես :)

ՅՈՒԴԱ, ԲԵՆԻԱՄԻՆ, ՈՒ ՅՈՎՍԵՓԱՅ
ՄԻԿԱԼ ԵՂԲԱՅՐԵՐԸ ՈՒ ՎԵՐԻՆԵՐԸ

- Յ^ա • Տէր իմ ահա քու հրամանդ ու
մեր խոստմունքը կատարեցինք • նո-
րէն քու ոտքըդ եկանք • հիմա քու
կասկածներըդ մէկ դի ձգէ՛ • ու
բերած ընծաներն իսալ առանց սըր-
դողելու ընդունէ՛ :
- Յ^վ • Ի՞նչ բերեր էք :
- Յ^ա • Խոնարհ երեսով՝ քեզ ընծայ բերինք՝ քաղց-
րահոտ խուկեր, հանձարեղ մեղուաց՝ ար-
ուեստին պտուղ՝ քեզ անոյշ հիւթեր :
Ասկայ շատ սուղ՝ ու մեծ բան մը չէ՛ աղ-
քատ ընծայ է, բայց ամենն ալ մեր՝ քըր-
տանց երեսաց՝ զուտրթ արդիւնքն է :
- Յ^վ • Ի՛նչ կամներ ոտք ելէք • ձեր ըն-
ծաները ինծի ընդունելի եղան :
Օ՛րուցեցէ՛ք ինծի • Յակոբ հայ-
րերն իդ ի՞նչ կընէ • ան բարի ծերը
տակաւին ո՞ղջ է :
- Յ^ա • Հրամարես աէր իմ • տակաւին ո՞ղջ
է • բայց ծերութեան պատճառաւ
քիչ մը նեղութիւն կը քաշէ :
- Յ^վ • Ի՛նչ զուտրթ, ձեր զրուցած ի՛նչ իսա-

մինն է անդեօք :

Յ^{ու} • Հրամէրես • անիկայ է :

Յ^վ • Տղայ • • • (երեսը նայած ատենըս
ինչպէս սիրտս թունա կելայ) Տը-
ղայ • ան • քու օրերըդ աւելցրնէ •
ու միշտ • • • (ո՞վ ան աս ինչպէս
սէր է) ու միշտ • • • (աչքէս ար-
ցունք կուգայ • ես իս չեմ կրնար
բռնել • ուրիշ տեղ երթամ որ չի
տեսնան :

ՅՈՒԴԱ , ՇՄԱԻՈՆ , ԲԵՆԻԱՄԻՆ , ՈՒ
ՅՈՎՍԵՓԱՅ ՄԻԿԱԼ ԵՂԲԱՅՐԵՐԸ

Բէն • Ս'եզ ասանկ կը ձգէ կերթայ :

Յ^{ու} • Եղբայրներ ես անոր կիսակատար
խօսքերէն բան մը չի հասկըցայ :

Շ^ի • Ո՛հ • ինչվան հիմա մեզի անուշ երես
ցըցուց • բայց բարկու-թիւնը սըր-
տին մէջը պահէր է :

Յ^{ու} • Ո՞վ գիտէ թէ գլուխնիս ինչ պի-
տի գայ :

Բէն • Եղբայրներ ինչո՞ւ համար դուք իս
հոս տեղը բերիք :

Շ^ի • Ս'ենք աս նեղու-թեանը արժանի

- էնք • անմեղ Յովսէփայ համար ան-
հիմա զմեզ կը պատժէ ։
- Յո • Մի անոր արեանը համար՝ կուզէ
մեզմէ վրէժ առնուլ ։
-

ՏԱՆԵՏԵՍ ՈՒ ՎԵՐԻՆԵՐԸ


- Տան • Հովիւներ • իմ տէրս ձեզ կը կան-
չէ • ու կուզէ որ այսօր կերակուրը
ձեզի հետ մէկ տեղ ուտէ ։
- Շի • Մշակ • մեզի համար որոգայթ մը
կը պատրաստըվի ։
- Բէն • Մի ինչպէս օր է ։
- Յո • Մի ինչ կերակուր պիտի ըլլայ ։
- Տան • Ինչո՞ւ համար կուշանաք • հովիւ-
ներ էլէք երթանք ։
-

ԱՄՄԻՆՔԸ ՏԱՆԵՏԵՍԵՆ Ի ԶԱՏ


Ո՞ր մեծ անձ Մարտիանու պաշտ-
պանէ պահէ քու ժողովուրդը ։

ԴԱՍ ՈՐԴԻՈՑ ՅԱԿՈԲԱՅ

(Ա) Չ մեծ ան Մ. բրահամու, մենք
 յանցաւոր ենք. բայց քու ժողո-
 վուրդըդ ենք. մի վարվեր մեզն հետ
 բոլոր քուկին արդարու թէդ. վս
 զն մարդ մը չի կայ որ քու առջևդ
 կարենայ զենքը արդարացնել:
 Թէ որ դուն մեզն սրդողեա. մենք
 ո՞ւր կրնանք փախչել ու ապաւի-
 նիլ. բայց եթէ քեզն՝ վասն զն
 դթած ես: Ինչպէս որ քեզմէ կը
 վախնանք. այնպէս ալ յոյսերնիս
 քեզն դրեր ենք. վասն զն դուն
 միանգամայն մեր դատաւորը ու
 հայրն ես:



Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ



ՅՈՎԱՍԷՓ ՈՒ ՏԱՆԵՏԵՍ

- Յ^աՎ . Խմ հրամանս կատարեցի՞ր :
- Տ^ան . Կատարեցի տէ՛ր իմ . հրամանքըդ ինչպէս որ ինձի զըուցեցիր նէ , ազգակից եբրայեցիներուն ուզած ցորենը տրվի . ու ան արծաթէ գաւաթը՝ որ հրամանքըդ սեղանի ու հմայութեան կամ գուշակութեան ատենը կը գործածես , անիկայ Րէնիամինին ցորենին մէջը պահեցի : Հովիւները աս նենգութիւն չի գիտնալով , ուրախուի՞մը ելան գացին . ծառաներուդ մէկը անոնց ետեւէն գնաց հեռվանց . քաղաքին դուռնէն դուրս ելածնուն պէս՝ զանոնք պիտի կայնեցընէ , ան սուտ գողութիւնը անոնցմէ պիտի փնտռէ , ու յանցաւորի պէս զանոնք պիտի բռնէ , ու նորէն քեզի պիտի բերէ :
- Յ^աՎ . Րէզի ի՞նչ որ ազսպրեցի նէ , ամմէնն ալ հաւատարմութիւն կատարեցիր .

- բայց դուն ինչո՞ւ հմբ ասանկ տակն
 ու վրայ ես եղեր . ու զարմացեր ես :
- Տան . Ո՞վ տէր իմ , ո՞վ չի զարմանար , եր-
 բոր կը տեսնայ որ հրամանքդ իրա-
 բու գէ՞մ բաներ կընես . մի և նոյն
 վայրկենի մէջ կը տեսնամ քու վրայ
 միանգամայն բարկութի ու գթու-
 թիւն , ու բախութի ու տրամութի :
- Յակոբայ որդեքը բարեկամաբար
 ընդունեցար , ու ետքը շփոթելով
 մը անոնցմէ զատվեցար գացիր :
- Ընոնք քու սեղանդ հրաւիրեցիր .
 ետքը անոնց մնաս տալու համար
 որոգայթ պատրաստեցիր . Բենիա-
 մինին հազարաւոր սիրոյ նշաններ
 ցըցուցիր . ու հիմա կուզես որ
 սուտ յանցանքով մը՝ անիկայ յան-
 ցանքի տէր ըլլայ :
- Յ՞ւ . Բեզե պէտքը չէ՛ որ ամմէն բան
 գիտնաս ու հասկընաս : Գնա՛ ու
 հովիւները իմ առջևս բէ՛ր . ու
 իմին մթին հրամանացս կուրութի՞
 հնազանդէ՛ . ու իմին օրէնքս ու
 հրամանս քեզի շատ ծանր չերև-
 նայ . ամմէն մարդ իշխանութի տակ
 է : Ըս իշխանութի աստիճանները
 անձ դրեր է . ո՞վ որ իրմէ մեծին

դէմ դնէ նէ, աստուծոյ դէմ դը-
րած կըլլայ:

Տ^{ահ} . Իմ ջանքս ու հոգս անխոհեմ ու
յանդուգն կերք մը չէ: Հարցուցիր,
պատասխան տրվի . հիմա լռութիւն
կը հնազանդիմ . ես քու օրէնքիդ
գլուխ կը ծռեմ, ու իմ վիճակիս
պարտքը կը ճանչնամ:

Երբոր ծառայ մը՝ իրեն տիրոջը՝ կամքը կը
քննէ, իրեն միամիտ՝ հնազանդութե՛ պա-
տիւը կալուէ: Ու յանդգնութե՛ օրինաց
երկնից՝ նա դէմ կը դնէ, ծառայելու տեղ՝
դատաւորութիւն՝ երբ ընել կուզէ:

Յ^վ . Ո՞վ յաւիտենական ճշմարտութիւն,
դուն որ մեր սրտին ծածուկ խոր-
հուրդները կը տեսնաս, դուն աղէկ
գիտես թէ ես արդե՞օք եղբայրնե-
րուս դէմ վրէժխնդրութիւն մը կը
մտմտամ, քու ամենակարօղ ձեռ-
քըդ չի թողու որ ես անանկ յան-
ցանք մը ընեմ, վասն զի վրէժխնդ-
րութիւնը միշտ ընողին գլուխը կը
դառնայ . իրմէ զօրաւոր ու ուժով
մարդէն վրէժ առնելը՝ խենդութիւն
է . իրեն հաւասար մարդուն դըպ-
չելը՝ վասնդ է, իրմէ պզտիկ մար-

դուռն հետ ալ կովիլը՝ անարգութի
ու ցածուութի է : Արեսանց ցըցու-
ցած բարկութիս՝ ուրիշ բանի հա-
մար չէ՛ . բայց միայն եղբայրներըս
զղջուով բերելու համար : Աս կու-
զեմ որ իմանան թէ մէկ յանցանք
մը որչափ մարդուս փուսս կուտայ .
ու ան բարկութիներէն վախնան ,
ու ետքը մէյմընալ անանկ յանցանք
մը չընեն :

Ես պիտի ըլլամ՝ իբրև որդեսէր՝ մէկ դը-
թած մայր մը , որ ամեն վայրկեան՝ կը վախ-
ցընէ իր՝ սիրուն զաւակը . բայց չուզեր
բնաւ՝ չգիտէր բնաւ՝ զանի պատժելը :
Չարնելու համար՝ վեր կը վերցընէ՝ ան
իրեն ձեռքը , բայց չիջնար բնաւ՝ իր զա-
կին վրայ՝ ձեռքին զարկուածքը . զարնելու
ատեն՝ սերը չի թողուր՝ կը բռնէ ձեռքը :

ՅՈՎՍԷՓ ՌԻ ԱՍԱՆԷԹ

Աստ . Ո՞վ կողակից իմ . շնտակ զըուցե-
ցիր . հիմա ես ալ իմին դիւրահա-
ւանութիւնս չեմ հաւնիր :

Յով . Ի՞նչ եղաւ . ի՞նչ պատահեցաւ :

- Աստ . Հիմա խստութիւն ընելու ժամանակ է : Ինչ ապերախտ օտարականները , որ քիչ մը առաջ ելան գացին , ան արծաթէ նք ամանը , որով դուն գալէքը կը գուշակես , ուզեր են գողնալ :
- Յով . Ինչ կը զրուցես :
- Աստ . Եւտակ կը զրուցեմ : Դառաները գացին զանոնք բռնեցին նէ , անոնք առաջ ըրած յանցանքնին աղէկ մը ուրացան : Այլ որ գողցեր է նէ թող մեռնի ըսին , ու մեկը ամմէնքս ալ Եգիպտոս գերի կը լանք ըսին : Բու մարդիկները աղէկ մը ամմէն տեղ փնտուէն ետքը , արծաթէ գաւաթը՝ Բենիամինին ցորեններուն մէջը գտան : Ինչ ատենը յանցաւորները համարձակութիւնին կորսընցուցին : Երեսուն գոյնը նետեց , բերանին պապանձեցաւ , ու որովհետեւ չէին կրնար բան մը զրուցել , ամմէնը մէկէն սկսան լալ , ու լաթերնին վրայի հագուստնին պատուակ :
- Յով . Ի վերայ այսր յովն , անոնց յանցաւոր ըլլալը ո՞վ գիտէ :
- Աստ . Աւրեմն իմ խօսքիս չես հաւտար :

- Յ^{ՊԷ} • Քայց դուն քիչ մը առաջ զանոնք
անմեղ կարծեցիր : Հիմա կը զըու-
ցես թէ ան ատենը խաբվերես . կա-
րելի է որ քիչ մը ատենէն ետքը ել-
լաս զըուցես , թէ հիմա ալ ան ատե-
նական պէս խաբվերես :
- Աստ • Ո՞վ կողակից իմ , քու կին տարա-
կոյսներըդ ու կասկածներըդ խիստ
չափազանց են :
- Յ^{ՊԷ} • Ի վերայ այսր ամենայնի , ինչպէս
որ պէտք է զգոյշ ու զգաստ չենք :
Ս'եր հոգին մարմնոյն մէջը՝ բանտի
մը մէջ գոցածի պէս , արտաքին ա-
ռարկաները չի կրնար տեսնել , ըզ-
գայարանքը՝ խաբօղ ծառաներ են ,
որ ամմէն բան անոր առջևը կը բե-
րեն , ասոնք ալ շատ սուտ կը զըու-
ցեն : Հոգին ասոնց հաւատալու
ըլլայ նէ , ուղիղ դատում չի կրնար
ընել . շատ հեղ կը խաբվի :
- Աստ • Ուրեմն մեր հոգին միշտ երկբայ-
ու թէ մէջ է , ու ճշմարիտը չի կրո-
նար տեսնալ , ու իր մ'թու թէ մէջը
միշտ կուրու թեամբ կապրի :
- Յ^{ՊԷ} • Հրամայրես , պարսպ տեղը կը յու-
սայ լոյս մը գտնալ թէ որ չի փըն-
տըուէ ու չի խնդրէ աստուծ մէ ,

որն որ մի միայն անփոփոխելի ու
յաւիտենական լուսոյ աղբիւրն է .
ամմէն պատճառներուն առաջին
պատճառն է . անբովանդակելի
բաները յինքեան կը պարունակէ .
մէնք ամմէնքս ալ անով կը շարժինք ,
կապրինք , ու կը լլանք , ու ամ-
մէն աղէկութիւն ինքիրմէ ունի .
լոյս . միտք . անհուն իմաստութի .
արդարութի . ճշմարտութի . ողջու-
թիւն . ու կեանք :

Աստ . Ո՛հ , ո՞րպիսի անձային ճառագայթ
մը քու երեսիդ վրայ կը փայլէ :
Ի՞ստձ խօսքերուդ մէջը անանկ մէկ
զօրութիւն մը կայ որ կարծես թէ
զըուցողը մարդ չէ : Խօսքերուդ
ականջ դնելու ատենըս կը գողամ .
ու երբոր դուն նոյ խօսքը կը նես
նէ , ո՞վ ըլլալըս ու ո՞ր ըլլալըս ան
ատենը կը հասկընամ :

Մութ անտառին մէջ՝ սոսկալի վախը՝ քո-
վըս կը տեսնեմ , անձանօթ ճամբուն՝ որչափ
ըլլալը՝ բնաւ ո՛չ գիտեմ : Ո՞վ դու լուսա-
ւոր՝ ճշմարիտ արե՞՛ ճրագ իմ շուղաց , թէ
որ դուն չըլլաս՝ ո՞վ պիտի ըլլայ՝ ուղղե-
ցոյց գժամ :

ՏԱՆԵՏԵՍ ՈՒ ՎԵՐԻՆՆԵՐԸ , ԵՏՔԸ
ԱՄՄԻՆԸ

- Տան . Ո՞վ տէր իմ , ահա յանցաւորները
եկան :
- Աստ . Տէս ամմէնն ալ քու առջևդ գետ-
նի վրայ քեզի երկրպագուի կրնեն :
- Տան . Ս՛եկը համարձակութիւն չունի
խօրաթեւոլ :
- Յ՞՛՛՛ . Ընծիաներ ի՞նչու ասանկ բան
ըրիք . դուք չէք գիտեր որ էս ամ-
մէն բան կիմանամ . ու ամմէն բան
առաջուց կը գուշակեմ :
- Յ՞՛՛՛ . Տէր իմ քեզի ի՞նչ պատասխան
տանք . ի՞նչ խօսք ու ի՞նչ պատճառ-
գտնանք . անձ մեր անօրէնութիւնը
յիշեց . անոնց պատիժը քաշելու
ատենն է . Ո՞վ յաւիտենական անձ ,
քու կին վրիժառու ձեռքըդ կը
տեսնամ . ու կիմանամ քու կին ար-
դարութեդ գաղտնի հրամանները՝
մարդկային յանցանաց համար :

Յանցաւոր մարդուն՝ սրտին մէջը միշտ՝ կը
վառէս բոց մը , որ գիշեր ցորեկ՝ կը խանձէ
կերէ՝ անոր խեղճ ծոցը : Ինչվան որ անի՝

ան կերպով քաշէ՝ իրեն պատիժը , ինչ
կերպով որ ան՝ աստե՛նօք գրծեց՝ իրեն
յանցանքը :

Յ՝Վ . Չէ՛ չէ՛ . անձ չընէ որ ես ձեզի այն-
չափ խստութիւն ու անգթութիւն
ընեմ : Պողոտութիւնը Քենիամինին
քովը գանձվեցաւ . անիկայ միայն
հոս տեղը մնայ ու ինծի ծառայ
ըլլայ . դուք ազատ դարձէք ձեր
հօրը քովը գացէք :

Յ՝Գ . Սէնք ինչ երեսով մեր հօրը դառ-
նանք երթանք :

Բէն . Ինչ կըզըուցես . է՛ս միայն քեզի
ծառայ պիտի ըլլամ ու հոս տեղը
պիտի մնամ :

Յ՝Վ . Սիայն դուն պիտի մնաս . մէկաւ-
ները թող շուտ երթան :

Բէն . Կայնեցէ՛ք : Ո՛հ . Յուդա՛ , դուն
ասանկ խօսք արվիր , ետքի բարեւը
ու եղբայրական համբոյրը չես ի
տար . դուք պիտի երթաք , ես աս
տեղը գերի պիտի մնամ . խեղճ
հայրս իմանայ նէ ինչ պիտի ըլլայ :

Թէ որ դուք ձեր խեղճ՝ եղբօրը վստայ՝
գութ մը ունիք նէ , իմին կողմանէս՝ իմ հօ-
րըս ձեռքը՝ դուք պագէք գոնէ : Զուր-

ցեցեք անոր՝ Թէ կենդանի եմ՝ ու զինքը
շատ սիրեմ, բայց մըսէք անոր՝ Թէ ես ի՞նչ
գժբազդ՝ վիճակի մէջ եմ:

- Յ՝Վ • (Համբերէ՛ սիրտ իմ • Համբերէ՛ :)
- Յ՝՝ • Տէ՛ր իմ՝ արդեօք կարելի է որ մեզնի
ներես :
Յ՝Վ • Ի՛նչ կարելի բան է • Ինչ որ զըուցե-
ցի նէ, ան պիտի ըլլայ :
- Յ՝՝ • Տէ՛ր իմ • գոնէ առանց սրդողելու
խօսքիս ականջ դիր :
- Յ՝Վ • Ի՛նչ կրնաս զըուցել • Ի՛նչ պիտի
զըուցես նէ, շուտ ըրէ՛ զըուցէ :
- Յ՝՝ • Իմին առջի անգամ հոս տեղը գա-
լու հրամանքիդ միտքը կուգայ :
- Յ՝Վ • Հրամայես, ան ատենը քեզնի ապրա-
պրեցի որ Բենիամինը մէկ տեղ
բերես : Դու ալ ինձի պատաս-
խան տրվիր, Թէ որ հայրս Բենիա-
մինէն զատվի նէ, կը մեռնի : Ես ալ
ըսի Թէ առանց Բենիամինի դառ-
նալու գալու ըլլաք նէ, իմ երեսս
մէջմըն ալ չէք կրնար տեսնալ :
- Յ՝՝ • Մէնք աս հրամանով դարձանք Յա-
կոբին գացինք • անիկայ ուղեց մեզ
նորէն քեզնի խրկել • մենք անոր
ըսինք Թէ Բենիամինը մէկ տեղ չի

գայնէ, ճամբորդութիւնիս պարապը
 կերթայ: Բնիկայ սկսաւ կանչվու-
 տել թէ աս ինչպէս բան է ես ա-
 ուանց զաւակի պիտի մնամ. հոա-
 քէլէն միայն երկու հաս զաւակ
 ունեցայ. առջինը վայրենի գազան-
 ներու կերակուր եղաւ. դուք աղէկ
 գիտէք. վասն զի անոր լուրը դուք
 ինձի բերիք. ես զանի մէյմըն ալ
 չի տեսայ. թէ որ մէկալն ալ հիմն
 իս ձգելու ըլլայ, ու ճամբան փոր-
 ձանքի հանդիպի նէ աս ծերութեա
 ատենը չեմ կրնար դիմանալ կը մեռ-
 նիմ: Բայց սովը օր է օր աւելցաւ.
 խեղճ հայրս ինչ կրնար ընել. թէ
 որ Բենիամինը չի թողուր, սովէն
 ու անօթութէն պիտի մեռնէր.
 Թէ որ Բենիամինէն զատվէր, սըր-
 տադողէն պիտի մեռնէր: Ա երջա-
 պէս ես անոր զըուցեցի. սիրելի
 հայր իմ. դուն Բենիամինը ինձի
 հաւատա՞. թէ որ առանց Բենիա-
 մինի դառնալու գալու ըլլամ, ան-
 կից ետքը զիս միշտ յանցաւոր սեպէ:
 Ինձի հաւտաց. ելայ եկայ, ու հը-
 րամանքիդ կամքն ալ կատարեցի:
 Դուն հայր ես, զաւակ ալ եղար.

տէր իմ՝ հիմա դուն իմ տեղըս
 եղի՛ր, ու ինձի զըուցէ • Թէ ի՛նչ
 սրտով ես իմ հօրըս առջևը ելլամ
 առանց անոր դարձընելու Բենիա-
 մինը որն որ ինձի հաւտաց ու յանձ-
 նեց: Ո՛հ չէ չէ • Թո՛ղ Բենիամինը՝
 Յակոբին դառնայ • ես աւելի կու-
 զեմ որ անոր տեղը քեզի աս տեղը
 ծառայ ըլլամ, քան թէ երթամ
 հօրըս բարկութիւնը ու խեղճու-
 թիւնը տեսնամ:

Յ¹ • (Սիրտըս կտոր կտոր կըլլայ:)

Յ² • Ինչո՞ւ համար ինձմէ երեսդ կը
 դարձընես • Թէ որ ես գթութեան
 արժանի չեմ, գոնէ անմխիթար ու
 խեղճ հայրս արժանի է: Տէր իմ,
 ետքի երթաք բարովին ատենը հոն
 տեղը գտնուելու էիր • կարծես թէ
 Բենիամինէն իր սիրելի զաւկէն
 զատված ատենը, սիրտը կը բրդէր •
 երթաս բարով կըսէր ու կը դառ-
 նար նորէն կը գրկէր: Բ՛նիմէն մէ-
 կերնուս զատ զատ զանիկայ նորէն
 կը յանձնէր: Հուսաքելը կը կանչէր
 Յովսէփը կը յիշէր • Բենիամինին
 երեսը նայէր նէ, կարծես թէ եր-
 կուքն ալ կը տեսնար • Բենիամինէն

զատվելու ատենը, կարծես թէ ամ-
մէնը մէկէն կը կորսընցընէր. ամմէ-
նը . . . բայց . . . տէ՛ր իմ. դուն
ինչո՞ւ կուլաս. գուցէ մեր խեղ-
ճութի՛ր տեսնալով սիրտըդ չի դի-
մացաւ: Ա՛յլ անձ դուն անոր սըր-
տին գթութիւն մը տո՛ւր:

Յ.Վ. Ա՛հ. այսչափը հէրիք է. իմ սիրտս՝
ալ չի դիմանար. ու զիս չեմ կրնար
բռնել: Սիրելի եղբայրներ՝ ձեր
եղբայրը նորէն ճանչցէ՛ք. ես իմ
սուտ ու շինճու բարկութիւն մէկ
դի ձգեցի. եկէ՛ք ձեզ գրկեմ. ձեր
Յովսէփ եղբայրը ես եմ:

Յ.ս. Յովսէփը:

Բէն. Ա՛յլ յաւիտենական աստուած:

Շ.ս. Սէղ.ք եղաւ մեղի:

Տան. Մ.ս ինչ հրաշք է:

Ա.ս. Շ.ս ատ զարմանալի բան:

Յ.Վ. Սէ՛ չէ՛. մի՛ վախնաք. ու իս ծախել-
նիդ միտքերնիդ բերելով, ձեզ մի՛
նեղէք. ան յանցանքը չըլլարնէ, ոչ
դուք ողջ կը մնայիք և ոչ Ս.գիպ-
տոս իր փրկութիւն ու հանգստութիւն
կրնար գանալ: Մ.ճ իս ձեզմէ ա-
ռաջ աս թագաւորական պալատը
խրկեց: Վարձէ՛ք դարձէ՛ք ձեր

Հօրը • ու բոլոր իմ մեծութիւնս ու պատիւս անոր պատմեցէ՛ք ու ըսէք որ ինքն ալ թող դայ ինձի հետ վայելէ : Ո՛հ • ինչո՞ւ լուռ կեցեր էք • անդէօք տակաւին կը տարակուսիք : Երբ • պատասխան տուր • Ե մա՛ւոն մտիթարվէ՛ • Ի՛նչ նիամին դուն ալ քովս եկո՛ւ :

Աստ • Տանետես • անդէօք ասկից ազվոր ու սիրալիր տեսարան մը տեսեր ես : Ես կէ՛ ինչպէս բոլոր եղբայրները վախով ու ուրախութեամբ երկանս քովը ժողովներէն • որը ճակատը կը պագնէ , որը ձեռքը , ու որը ըզգեստը կը պագնէ : Ի՛նչ ալ կուզէ որ զինքը ամմէնուն բաժնէ : Ի՛մբողջ խօսք մը չեն կրնար զըռցել • ու չափազանց ուրախութեն , խօրաթելու տեղը , ամմէնը մէկ տեղ կուլան :

Բայց ան արցունքը՝ լաւ կը խօրածէ , ու իրեն միտքը՝ կը հասկըցնէ • ան լուռութիւնը՝ որչափ շատ բաներ , այսօր հոս տեղը՝ ինձ կ'իմացնէ : Ճշմարիտ խնտում՝ ցնծութի՛ սրտի , որպէս զի ըլլայ՝ ամմէնուն յայտնի • կարօտ չէ բնաւ՝ շատախօս լեզուի , և ոչ ճառով շրթանց՝ մեծ հուետորի :

- 3^ա • Ո՛վ արդար :
 Դ^ա • Ո՛վ վեհանձն :
 Բէն • Ո՛վ երջանիկ Յովսէփ :
 3^ա • Լ՛հա քու երազներըդ եկան ելան :
 Դ^ա • Ո՛վ յաւիտենական նախախնամու-
 թիւն • մարդկային խոհեմութիւր՝
 քու առջևըդ անմտութի կը սեպվի :
 Յովսէփը ծախեցինք՝ միայն անոր
 երկրպագութիւն չընելու համար •
 ու հիմա անոր երկրպագութի կը-
 նենք՝ զանի ծախելնուս համար :
 3^ա • Լ՛ճ՝ դիպուածները անանկ կերպով
 մը կը կարգադրէ որ , իրեն կամացը
 շատ դէմ դնողը , բռնի իրեն կամա-
 ցը կը հնազանդեցնէ :
 3^ա • Լ՛ղբայրներ • իմ դիպուածքներուս
 զարմանալի դարձուածքը՝ երևցա-
 ծէն աւելի բան մը յինքեան կը
 պարունակէ : Ես իմ հօրմէս շատ
 սիրով ձեզի խրկրվեցայ , դուք ու-
 գեցիք նենգութիւն իս մեռցնել :
 Ես ստակով բարբարոսներու ծա-
 խեցիք : Լ՛գիպտոսի մէջ ծառայ-
 թիւն ըրի • ինձի համար ամբաստա-
 նութի ըրին , ես իմ անմեղութիւնս
 չի պաշտպանեցի , զըպարտողին պա-
 տիժը ես քաշեցի , երկու յանցա-

ւորնէրու մէջ գտնըվեցայ • մէկին
 մահ գուշակեցի, մէկալին ալ՝ փառք:
 Իմ հալածիչներըս սիրով ու բարե-
 կամութիւն ընդունեցայ • անոնք որ
 իս մեռցընել ուղեցին, անոնց կեն-
 դանարար կերակուր մատակարարե-
 ցի: Ինծի Փրկիչ Աշխարհի ըսել-
 նին լսեցի: Անորեօք ես որուն նը-
 մանութիւն ու պատկերքն եմ: Ան-
 տարակոյս անձ մէկ մեծ բան մը կը
 պատրաստէ, որուն ստուերը ու
 օրինակը Յովսէփը պիտի ըլլայ:

ԴԱՍ ՈՐԴՒՈՑ ՅԱԿՈՒԱՅ

Անմիտ է ան մարդը, որ իրեն մըտ-
 քովը այ խորհրդոց դէմ կը դնէ:
 Սարդ մը որչափ խորամանկ ու
 հանճարեղ ըլլայ, երբոր ուրիշի
 վնաս տալու համար՝ որոգայթ մը
 լարելու ըլլայնէ, վերջապէս ան
 որոգայթին մէջը ինքը կիյնայ: Աւ-
 ճջմարիտ առաքիլնին երբոր նեղու-
 թի կը քաշէ, բարձր արմաւենիի մը
 պէս, աւելի ուժով վեր կելայ ու
 կը բարձրանայ:

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.



Abraham Lincoln

3/11... 42p.

